№ 10 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՅՈՒՆՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՅՈՒՆՎԱՐԻ № 10

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ **1913** Թ. ՀԱՄԱՐ
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.։ Յունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը 85 կոպ.։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան **ՁՐԻԱԲԱՐ** հետեւեալ 2 գրքերը.

1) **„Մշակ" եւ հայ կինը"**, որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանաստեղծութիւնները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին մասնաւորապէս։ Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր զրաւիր պատկերով եւ մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով։

2) **„Մշակի" քառասնամեակ"** Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրայ։ Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները։

«Մշակի» ոչ բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.։ Ճանապարհածախսը՝ 15—20 կոպ. գնողի վրա։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal "MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Չորեքշաբթի, յունվարի 16-ին, երեկոյեան ժամը 7-ին նշանակված է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

(ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԿԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ, մուտքը Բարօնսկայա փողոցից)։

Զբաղմունքի առարկաներ.

1) Տրահոմզական գործունէութեան մասին։ Զեկուցումն Աւր. Մխիթարեանի։
2) 1913 թւի գիւղատնտեսական ցուցահանդէսների և համագումարների մասին։ Զեկ. Ա. Քալանթարի։
3) Հերթական խնդիրներ։

Ժողովին կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձինք, որպէս հիւրեր։

(առ.) 29. 2—2

ԾԽԱԽՈՏ

Փորձեցէք ծխել „Ա Ն Ի"

ԾԽԱԽՈՏ

15 հատը 6 կոպէկ։

25 հատը 10 կոպէկ։

ПАПИРОСЫ
АНИ
ПАПИРОС

Անի միջնաբերդի ընդհանուր տեսքը:

[illegible]

Ծխախոտագործարան „Մ Ի Ր"

Պահանջեցէք ամեն տեղ

ԱՄԷՆ ՏԵՂ:

Ծխախոտագործարան „Մ Ի Ր"

(Կ. Հ. ու.) առ. 936. 50—14

Ասատուր Թորոսեան,

որ 4—5 տարի է ինչ Պարսկաստանի Սպահան քաղաքից մեկնել է Ռուսաստան և սրանից երկու տարի առաջ գտնվում էր Կիէվի և Օդէսսայի միջև գտնվող Վապնիարկա կայարանում, յայտնի չէ ներկայումս ո՛ւր է գտնվում: Ամբողջ 18 ամիս է՝ նրա ընտանիքի նամակները, ուղղված յիշեալ կայարանի հասցէով, մնում են անպատասխան։ Սրանով խնդրվում է պարոնի ուր լինելու մասին տեղեկութիւն ունեցողներին երկտողով տեղեկացնել նրա ընտանիքին հետեւեալ հասցէով. Индія. Сингапоръ. E. S. Johannes. Adelphi Hotel. Singapore.

առ. 30. 2—2

Գրական-Գեղագիտական Սալօն

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻ ընթերցարանի մուտքը ամեն օր առ. 11 ժամից մինչև երեկ. 6 ժամը ազատ է արուեստագէտների, գրագէտների, գեղագէտների, լրագրողների և «Տարազի» բաժանորդների ու նրանց ընտանիքների համար։ Սրանք են և մշտական այցելուներ հերթական jour fixe-երին ու հանդէսներին։

Բացի այն անձերից, որոնք արուեստի, լրագրութեան ու գրականութեան հետ անմիջական առնչութիւն ունեն, ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ կարող են յաճախել նաև «Տարազի» բաժանորդները։

Այսու հրաւիրվում են այցելուները այսուհետև ՍԱԼՕՆԻ երեկոյթները յաճախելիս վերցնել իրանց հետ և հրաւիրատոմսերը, որ ստացել են աչքօնի սկզբին, և մտնելիս ցոյց տալ սպասաւորներին։ Նրանք, որոնք հրաւիրատոմս չունենն, խնդրվում են ստանալ։

առ. 31. 3—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլինով, ՌԵՏԳԻ պլէպաբատներով և էլեքտրականութեամբ։

Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Բէհբութեան փող. № 22 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 699. 100—92

ՃԳՆԱԺԱՄԻ ԵԼԵՒԷՋՆԵՐ

II

Արդեօք եւրոպական պետութիւնների համար ձեռնտու և նպաստաւոր են Կ. Պոլսի դէպքերը, թէ բոլորովին մերժելի և պախարակելի են։

Հեռագիրները հաղորդեցին, որ Լոնդոնում հաւաքված դեսպանները վրդովված և զայրացած են պոլսական անակնկալներից և դատապարտում են նրանց ամենակտրական կերպով։ Նոյն հեռագիրները ծանուցին, որ եւրոպական հասարակական կարծիքը մեծ տհաճութեամբ է վերաբերվում երիտասարդ թիւրքերի պատերազմասիրական գործողութիւններին։

Այո, այդ հաւաստիացումները համապատասխանում են այն տրամադրութեան, որի մէջ գտնվում էին Եւրոպան և մասնաւորապէս դեսպանախորհուրդը Լոնդոնում։

Պէտք է այդպէս ցանկանար Եւրոպան, որովհետև նա խուսափում է այն ամենից, ինչ որ կարող էր միջազգային ընդհարումների առիթ ծառայել։

Բայց վերև յիշված հեռագիրներից դուրս յայտնի են մեզ և ուրիշ հեռագիրներ, որոնք հաղորդեցին մեզ, թէ Աւստրիան և Գերմանիան գաղտնի կերպով պաշտպանում են Թիւրքիայի բռնած մերժողական և դիմադրողական դիրքը բանակցութիւնների գործում և ծածուկ ազդում են Պոլսի բարձր շրջաններում իրանց տեսակէտներով։ Սոֆիայից ստացված հեռագիրը հաւատացնում է, որ Թիւրքական քաղաքական յեղաշրջումը մի քաղաքագիտական ճարպիկ խաղ է, որի վերաբերութեամբ իրանք թիւրքերը կայացրել էին փոխադարձ համաձայնութիւններ և իբր թէ յեղաշրջումը կատարվել է նախկին կաբինէտի գիտութեամբ։

Դրանք ենթադրութիւններ են, որոնք սակայն բնորոշ են ժամանակի և քաղաքական հանգամանքների նկատմամբ։

Դժուար է հաւատալ, որ Կ. Պոլսի քաղաքական դէպքերը ոչ մի առնչութիւն չունեն եւրոպական այս ու այն պետութեան դաւադրութիւնների հետ։ Հաւանական է թւում, որ երիտասարդ թիւրքերը ունեն իրանց թելադրողները Եւրոպայում և գործում են մի որոշ աստիճան օտար ազդեցութիւնների տակ։

Երբ որևէ հիմք կայ կասկածելու եւրոպական համերգի կայունութեան վերաբերմամբ, եթէ պետութիւններից մի քանիսը համակրում են պոլսական յեղաշրջման հեղինակներին, այն ժամանակ Բոսֆորի ափերի դէպքերը աւելի ևս վտանգաւոր և սպառնական բնաւորութիւն են կրում, որովհետև նման դէպքերն այլ ևս զըսպվել չեն կարող և Կ. Պոլիսը կը ներկայանայ իբրև զանազան միմեանց հակասող, միմեանց բացասող ազդեցութիւնների և կարգադրութիւնների ասպարէզ.

Իսկ դա նշանակում է, որ Կ. Պոլիսը պատրաստվում է սոսկալի յուզմունքների, դաւերի և ընդհարումների հանգոյցակէտ դառնալ, որոնք կը գըտնեն արձագանքներ օսմանեան պետութեան զանազան ծայրերում.

Մ՛ի՞թէ ելք չը կայ ներկայ վիճակից։

Միթէ օսմանեան կառավարութիւնը անկարող է հանդիսանալու կարգ ու պահովել իր երկրում։

Միթէ եւրոպական միացեալ զօրքը պէտք է խաղաղեցնի ալեկոծված Պոլիսը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
14 յունվարի

Վիէննա.—«Ցէյտը» գրում է. «Ներկայ տագնապի մէջ պարզվեց, որ եռապետեան համաձայնութեան և եռապետեան դաշնակցութեան հայեացքները տարբերվում են իրարից. Անգլիայում նորից տիրեց ուժեղ հակագերմանական տրամադրութիւն։ Գերմանիային և Աւստրիային համարում են յեղաշրջումը ոգեւորողներ։

Լոնդոն.—Դանեվի բանակցութիւնները ռումինական դեսպան Միշուի հետ վերսկսվեցին և կրում են բարեկամական բնաւորութիւն։ Րէյտերը հաղորդում է, որ սխալ են այն տեղեկութիւնները, թէ իբր Ռումինիան պահանջում է զիջել Սիլիստրիան և Բալչիկը։

Բուխարէստ.—Կրայովում, Բրայիլում և Սլատինում կայացան միտինգներ, ուր հռետորները պահանջեցին, որ Բուլգարիան շուտով գոհացում տայ Ռումինիայի պահանջներին։

Բէլգրադ.—Նոր նուաճված երկրներում առանձին վարչական կազմ հիմնելու տեղեկութիւնները սխալ են. կառավարութիւնը այդ հարցը չէ քննել։

Աթէնք.—«Էստիան» գրում է. «Իտալացիք նուաճած Եգէյեան կղզիներում շարունակում են հակայունական քաղաքականութիւն։ Գեներալ Ամէլիօն արգելել է յունական շոգենաւերին մօտենալ կղզիներին, պատճառաբանելով թէ յունական դրօշակը գրգռում է ազգաբնակութեան»։

Պետերբուրգ.—Գերմանական կայսրի ծննդեան օրվայ առիթով Ցարսկոէ-Սէլօյի Ալէքսանդրեան պալատում կայացաւ նախաճաշ Բարձրագոյն ներկայութեամբ։ Սեղանին Կայսրի աջ կողմը նստել էր դեսպանը, ձախ կողմը՝ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաէվիչը։ Կայսրը բաժակ առաջարկեց գերմանական կայսրի առողջութեան համար։

Մօսկվա.—Լիւթերականների եկեղեցում իշխանութիւնների ներկայութեամբ կատարվեց հանդիսաւոր ժամերգութիւն գերմանական կայսրի ծննդեան օրվայ առիթով։ Կայացաւ գերմանական գաղութի խնճոյք, ուր բաժակներ առաջարկվեցին Թագաւոր Կայսրի և Վիլհէլմի համար։

Վիէննա.—Վախճանվեց արքեդուքս Րայնէրը։

Պէկին.—Չինական կառավարութիւնը խուտուխտայի հեռագրին ուղարկած պատասխան-նամակի մէջ համոզում է նրան հետևել մոնղոլ իշխանների մեծամասնութեան, որոնք ճանաչեցին չինական հանրապետութիւնը, յայտնելով որ յամառութեան դէպքում պատերազմի պատասխանատուութիւնը կը կնէ նրա վրա։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Կ. ՊՈԼՍԻ ԴԷՊՔԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)
14 յունվարի

Կ. Պոլիս.—Որովհետև Բեռլինի և Վիէննայի թիւրք դեսպանները, ինչպէս և նախկին մեծ վէզիրը հրաժարվեցին ստանձնել արտաքին գործերի մինիստրի պաշտօնը, ընտրութիւնը կանգ առաւ եգիպտական պրինց Սաիդ-Խալիլ-փաշայի վրա, որ պատգամաւոր էր թիւրք-իտալական պատերազմին հետևած բանակցութիւնների ժամանակ։

Պետ. Հեռ. Գործ. թղթակցի ստացած տեղեկութիւնների համաձայն, Էնվէր-բէյը Քեամիլ-փաշայի կաբինէտի մինիստրների հետ բանակցելու ժամանակ հեգնել է այն ցուցումները, թէ պետական գանձարանը դատարկ է և հնարաւորութիւն չը կայ շարունակելու պատերազմը առանց դրամի, յայտնել է, թէ կը յանձնէ կառավարութեանը «Մ. և Ա.» կուսակցութեան մօտ գտնվող գումարները և որ նրա բոլոր անդամները կը տան իրանց բոլոր կարողութիւնը։ Սակայն թղթակիցը աւելացնում է, որ կօմիտէտը ոչ մի խոշոր գումար չունի, թէև նրա անդամները, իշխանութեան գլուխ եղած միջոցին, ձեռք են բերել խոշոր պետական միջոցներ։

Ուրբաթ օրը տեղի ունեցաւ սովորական սէլամլըքը, ըստ որում սուլթանը մզկիթ գնաց Շէվքէթ փաշայի և Էնվէր-բէյի ուղեկցութեամբ։ Առաջին անգամ սելամլըքին մասնակցեց Ասիայից եկած քիւրդական հեծելագունդը։

Լուրեր են պտտվում, թէ հաշտութեան կողմնակիցների և նախկին կաբինէտի մէջ նոր յեղաշրջում է պատրաստվում։ Սպասվում են մահափորձեր Նազըմ-փաշայի մահվան վրէժին ծարաւի վրէժխնդիրների կողմից։ Յեղաշրջման աջողութիւնը բացատրվում է Նազըմ փաշայի ինքնահաւանութեամբ, որ ուշադրութիւն չը դարձրեց այն նախազգուշացմանը, թէ մահափորձ է պատրաստվում իր կեանքի դէմ։

Վիէննա.—Կ. Պոլսից հաղորդում են, որ ֆինանսական խմբակը Դէյտշէբանկի գլխաւորութեամբ կօնցեսսիա է ստացել էլեքտրաքարշ կառուցանելու Կ. Պոլսում, որի դիմաց նա պէտք է դրամ տայ թիւրքաց պետական գանձատան անյետաձգելի կարիքների համար։ «Վինէր-Ալգ.-Ցայտը» հաղորդում է, որ ստացված դրամը տրվելու է պաշտօնեաների ռոճիկների համար։

Սօֆիա.—«Միրը» գրում է. «Զը նայած եւրոպական մամուլի մի մասի երկիւղներին, երիտասարդ-թիւրքերի յեղաշրջումը ոչ թէ պատերազմի վերսկսմանը կը նպաստէ, այլ ընդհակառակը առաջ կը բերէ հաշտութիւն»։

Լոնդոն.—Մամուլն ամբողջովին ներկայ ճգնաժամում բալկանեան պատգամաւորների կողմն է։

Րէյտերը տեղեկացաւ, որ դաշնակից պատգամաւորների նօտան խմբագրված է։

Բուլգարիայի գեներական լիազօր Ֆօստովը վաղը մեկնում է Չաթալջա։

Օդեսսա.—Եկաւ Կ. Պոլսի ոստիկանապետ Իսմայիլ-էֆենդին, փախչելով յեղաշրջման պատճառով։

Վերջին տեղեկութիւնների համաձայն, ներկայումս Կ. Պոլսում են գտնվում 4-րդ և 5-րդ զօրաբանակները, որոնք գլխաւորապէս բաղկացած են քիւրդերից. հէնց քիւրդերի մէջ է մեծ աջողութեամբ ագիտացիա մղում պատերազմի կողմնակիցների կուսակցութիւնը։ Զինւորները հաւաքվում են միտինգների և պահանջ յայտնում շարունակելու պատերազմը։ Սկիւտարի մօտակայ Սելիմիյէ զօրանոցում բանակ դրած քիւրդական գնդերի զինւորների մէջ յուզմունքը այնպիսի սաստկութեան է հասել, որ սուլթանը իր ադիւտանտին ուղարկել է նրանց մօտ խաղաղեցնելու համար։ Պատերազմի փախուստով բռնկված զօրքերի մի մասը ուղարկված է Դարդանել, իսկ միւս մասը Չաթալջայի գիծը։ Նրանց փոխարէն, պատերազմի բեմից մայրաքաղաք են փոխադրված մի քանի զօրամասեր։ Չաթալջայից եկել են արդէն 3 էշելօն վեց թնդանօթներով։ Երիտասարդ-թիւրքերը մասնաւոր խորհրդակցութիւններ են գումարում պրինց Սաիդ Հալիմ փաշայի մօտ։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ)

(Սեփ. թղթակցից)
Կ. Պոլիս, 29 դեկտեմբեր

◆ Ամբողջ մամուլը կը խօսի «Հաւաքական ծանուցագրին» վրայ, որ դաքձեալ չի մատուցուիր Բ. Դրան։

Դեսպանները չորս-հինգ օրէ ի վեր անընդհատ կը գումարուին, խմբագրելու համար այս ծանուցագիրը, որ սակայն չի խմբագրուիր կատարեալ համաձայնութեամբ։ Կըսուի թէ դեսպաններուն մէջ անհամաձայնութիւն կայ։

Թիւրք մամուլին մէջ հակաֆրանսական

հակում մը կը տեսնուի։ Մասնաւորապէս Ր. Պուանկարէի դէմ կատարեալ թշնամանքի զգացումով մը լեցուած են բոլոր թերթերը։

◆ Քեամիլ փաշան մի քանի օր հիւանդ ըլլալով տունէն դուրս չէ կրցած ելլել։ 85 տարեկան ծերունիի մը հիւանդութիւնը անկարողութիւն մեկնելով՝ իր հակառակորդները չէին յուսար, որ Քեամիլ-փաշա վերադառնայ այլեւս Բ. Դուռ, և կը տարածէին ամեն կողմ, թէ դահլիճը պիտի տապալի։

Այսօր Քեամիլ-փաշա առողջացած դարձաւ Բ. Դուռ, կայսեր պալատ այցելութիւն մը տալէն յետոյ։ Այս պարագան յուսահատութիւն պատճառեց իր հակառակորդներուն, որոնք ուրիշ վախճանի մը կը սպասէին իշխանութիւնը յափշտակելու համար։

◆ Ազատական (???) «Իկդամի» տնօրէնը՝ Ահմէդ Ջէվդէթ բէյ, որ քրիստոնէական քաղաքակրթութեան սիրահար մը ճանչցուած է, այսօր իր թերթին Վիէննայէն ուղղած նամակի մը մէջ Ասիական Թիւրքիոյ քրիստոնեաներն իբր պատուհաս կը ներկայացնէ Թիւրքիոյ և երկիւղ կը յայտնէ, որ Փոքր Ասիոյ մէջ խնդիրներ պիտի ստեղծուին այս քրիստոնեաներու միջոցաւ։ Ասիկա «պէտք է ուշադրութեան առնենք, որ միջազգային նոր յանձնառութիւններու տակ չմտնենք» կըսէ և ասով ցոյց կուտայ, թէ ի՛նչ կերպով Թիւրքերը կուզեն խուսափիլ անհրաժեշտ դարձած պարտականութենէ մը, որ եթէ իրենց ձգուի, բնաւ կատարելու տրամադիր չեն։ «Շատ կը վախնամ, որ,—կըսէ,—քրիստոնեաները պաշտպանելու պատրուակով Թիւրքիոյ գլուխը շատ մը աղէտներ պատրաստեն»։ Ասիկա մտայնութիւն մըն է, որ ինքնապէս բարենորոգումներ չգործադրելու հաստատ մտադրութիւնը մատնանիշ կընէ։

Ջէվդէթ-բէյ կը գրգռէ նաև իսլամները Եւրոպային դէմ, բոլոր Եւրոպան թշնամի ցոյց տալով իսլամաց և պաշտպան՝ բալկանեան պետութեանց։

Ջէվդէթ-բէյ կը կարծէ, թէ Էդիրնէն և Եգէական կղզիները Թիւրքիայէն կորզուելուն բուն նպատակն է ապագային Անատոլուի եզերքներն ալ գրաւել, և իր յօդուածը կը վերջացնէ սա տողերով.

«Էդիրնէի կուսակալութիւնը ձեռքէ հանելնուս յաջորդ օրն իսկ, պէտք է Անատոլու գաղթենք։ Փոխանակ պահ մը վերջը Պոլիսը բուլգարներուն կոխոտել տալու, աւելի նախապատիւ պէտք է համարենք այժմէն իսկ մեղմութեամբ ուրիշին թողուլ Պոլիսը։ Եթէ ոչինչ կուգայ մեր ձեռքէն, գոնէ Պոլիսը և իր շրջակայքը միջազգային ընենք։ Եթէ, Աստուած մի արասցէ, Պոլիսը մեր ձեռքէն երթալու ըլլայ, մեզի ուրիշ բան չի մնար ընելու, այլ Կոնիա քաշուիլ ու Պոլիսն ալ միջազգային վարչութեան մը յանձնել։ Ապագային Պոլիսը բուլգարներու կոխոտել տալէն աւելի նախապատիւ է այս կերպը»։

31 դեկտեմբեր

◆ Դեսպանական գումարումները և խորհրդակցութիւնները կը շարունակուին «ծանուցագրին» վրայ։ Դեսպաններն անոր բովանդակութեան վրայ կը խօսին անպաշտօն կերպով Թիւրքիոյ արտաքին գործոց մինիստրին, և... սակայն անիկա չի մատուցուիր պաշտօնապէս։

Երէկ Քեամիլ-փաշան մինիստրներու ժողով գումարեց Բ. Դրան մէջ և առաջարկեց կացութեան այս ծանրակշիռ վիճակին առջև պատասխանատուութենէն խուսափելու համար գումարել ազգային մեծ ժողով մը, ինչպէս ըրած էր Միդհաթ-փաշա 1876-ին, մասնակցութեամբ ծերակուտականներու, բոլոր պաշտօնատարներու, նախորդ մինիստրներու, երևելի վաճառականներու, հմուտ անձնաւորութիւններու, և իւլէմաներու և հոգևոր պետերու, և անոնց պարզել կացութիւնը։ 1876-ին գումարուած ժողովը, հայրենասիրութեամբ վառուած, չընդունեց եւրոպական կոնտրոլն և պատերազմի տեղի տուաւ. և գիտէք թէ ի՛նչ եղաւ հետևանքը։ Հիմա ալ տարբեր արդիւնք գուշակելը միամտութիւն պիտի ըլլար, քանի որ Թիւրքերը խօսելու մէջ մեծ-մեծ ջարդել շատ կը սիրեն, սակայն վտանգի պահուն ամենէն առաջ խոյս տուողներն են։

Քեամիլ-փաշայի այս առաջարկին վրայ սակայն վերջնական եզրակացութեան մը չեն կրցած գալ մինիստրները։

Հաւանօրէն «ծանուցագրին» պիտի սպասուի։

1 յունուար

◆ Պետութեանց համաձայնութեամբ մատուցանելի հաւաքական ծանուցագիրը դեռ չէ մատուցուած։ Մտքերը կը զբաղին անով շարունակ և կը տրուին բազմաթիւ մեկնութիւններ, սակայն առանց որոշապէս գիտնալու թէ ի՛նչ է բուն բովանդակութիւնը այդ ծանուցագրին։

Թիւրք հանրային կարծիքին մէջ որոշ երկու հոսանք կազմուած է հիմա։ Մէկ մասը կը կարծէ, թէ Եւրոպա լքանած ըլլալով Թիւրքիա, դիմադրութիւնը անօգուտ է և համակերպութենէն զատ ուրիշ միջոց չկայ։

Մէկ մասն ալ, ընդհակառակը, կը կարծէ, թէ Չաթալջայի մէջ իրենց յաղթութիւնը ապահով է, ուստի պէտք է պատերազմը շարունակել սաստկութեամբ, և փրկել Թիւրքիոյ պատիւը։ Այդ երկու իրարու հակառակ կարծիքները որոշապէս չեն արտայայտուիր, սակայն տող ընդ մէջ իրարու հակառակ կարծիքներու այս բաղխումը զգալի կըլլայ։

Պատերազմը շարունակելու կուսակիցներու թիւը շատ աւելի մեծ է դժբաղդաբար, քան յուսահատներուն, վասնզի կառավարութեան դիւանագիտական խոհեմութիւնը Թիւրքերէն շատեր իրական ուժի մը վրայ յենած կը կարծեն, մինչ այդպէս չէ իրականին մէջ։

Հայորդի

ԹԻՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ ՔԵԱՄԻԼ-ՓԱՇԱՅԻ ԿԱԲԻՆԷՏԻ ԴԷՄ

Կ. Պոլսում հրատարակվող «Թանզիմաթ» թիւրք թերթը դեկտ. 26-ի իր համարում զետեղել է Լութֆի Ֆիքրիի մի յօդուածը՝ «Երկրորդ Արևելեան Ռումէլիայի մի խաղ» վերնագրով։

Այդ յօդուածը ցոյց է տալիս, որ թիւրք ինտելիգենցիայի այն մասի մէջ անգամ, որը Քեամիլ-փաշայի խաղաղասէր տրամադրութիւններին ուժ էր տալիս և ձգտում էր ժամ առաջ խաղաղութիւնը հաստատված տեսնել, գաղափարների որպիսի՜ յեղաշրջումն է կատարվել ոչ յօգուտ Քեամիլ-փաշայի տակտիկայի։

Լութֆի Ֆիքրիի այդ յօդուածը առաջ ենք բերում ամբողջովին՝ արտատպելով Կ. Պոլսում հրատարակվող «Մանզումէի Էֆքեար» թերթից.

Առջի իրիկուն իմացանք, թէ մեծ պետութիւններէն ոմանք Էդիրնէի խնդիրը լուծելու մասին կերպ մը գտած են, որուն համեմատ Էդիրնէ իբր չէզոք շրջանակ մը պիտի թողուի։ Կարգ մը պատճառով մենք չուզեցինք այս մասին խորհրդածութիւններ ընել։ Բայց առաւօտեան թերթ մը այս լուրը տուած ըլլալուն համար մենք ալ հարկ կը զգանք առաջարկուած լուծման կերպին մասին խորհրդածութիւններ ընել։

Եթէ դժբաղդաբար կայ կէտ մը, զոր կը սկսինք հասկնալ, ան ալ սա է, թէ եւրոպական մեծ պետութիւնք, և մանաւանդ բալկանեան պետութեանց բարեկամութիւնը վայելող եռեակ համաձայնութեան պատկանող տէրութիւնք, մեր այս դահլիճը շատ յարմարող կը տեսնեն ու կը կարծեն, թէ իրաւ թէ անիրաւ պիտի կրնան իրենց ուզածն ընդունիլ տալ անոր։ Իրերու կացութենէն այս եզրակացութեան կուգանք մենք։ Մեծ պետութիւնք բոլոր յորդորները մեզի կընեն, մեզ «աւելի թոյլատու եղէք» կըսեն, իսկ բալկանեան դաշնակիցներուն ոչինչ կըսեն։ Զարմանալի հոգեբանութիւն, տարօրինակ տրամաբանութիւն։ Բալկանեան պետութիւնք չէ որ իրենց մարմնոյն վրայ անդամահատութեան կենթարկուին, այլ մենք։

Եւրոպական պետութիւնները մեզի «աւելի թոյլատու գտնուեցէք» ըսելով մեզի աս ըսած կըլլան. «Ձեր սրունքը թողուցիք, պիտի կարեն, ըսաւ, բայց մի շարժիք։ Քիչ մըն ալ թոյլտուութիւն ըրէք և կեցէք որ ձեր քիթն ալ, թևն ալ և ականջներն ալ կարեն...»։ Սակայն ոչ ոք չի դառնար դաշնակիցներուն ու չըսեր թէ՝ «Է՜յ, ալ քիչ մըն ալ խիղճ ունեցէք. կը բաւէ այսքան կտրածնիդ...»։ Մեր հասկցածին համեմատ՝ անոր այս սկզբունքը կը տիրէ Լոնդոնի հաշտութեան բանակցութեանց մէջ։

Պէտք է խոստովանիլ, որ մեր պատուիրակներուն բռնած ընթացքն ալ ու մեզի համար այս սոսկալի սկզբունքին համեմատ շարժիլն ալ Եւրոպայի համար քաջալերութիւն մը եղաւ։ Որովհետև մեր պատուիրակները փոխանակ ժողովին մէջ խորհելով, մտածելով որոշում տալ կրցող, և առաջուց գծուած սկզբունքի մը համեմատ ի՛նչ ընելը գիտցող մարդեր ըլլալու, Բ. Դրան և բալկանեան պետութեանց պատուիրակներուն միջև պարզապէս խօսք փոխադրողի մը և կամ հեռաձայնի մը պէս եղան։ Գիտենք որ բալկանեան պետութեանց պատուիրակները ամեն բանի համար կրկին կրկին իրենց կառավարութիւններուն դիմում կընեն։ Մինչդեռ օսմ. պատուիրակները տասը բառ ըսելուն պէս իրենց իրաւասութիւնը խնդիր կընեն ու կը ստիպուին դարձեալ հրահանգ ուզել Բ. Դրանէն։ Եւ ահա նոր հրահանգներ կը տրուին, բայց ան ալ հազար դժուարութիւններու և ծածկագրութեան սխալներու կենթարկուի։ Օրեր կանցնին, խիղճ Էդիրնէն ալ աւելի կը մօտենայ անկումի և մահուան։ Մեր խելքը չհասաւ այս կերպ բանակցութեան։ Բալկանեան պատուիրակները չեն շփոթիր Բ. Դրան բացի Էդիրնէէն ամբողջ Ռումելին իրենց ձգելու չափ զոհողութիւն ընելը տեսնելով։ Շատ հաւանական է, որ բալկանեան պետութիւններն ու իրենց պաշտպան մեծ պետութիւնները խորհին թէ «Թիւրքիա այս խնդրոյն մէջ աւելի պարկի մը նմանեցաւ, որուն որչափ զարնես՝ այնքան փոշի կը հանէ, քիչ մըն ալ նեղենք Թիւրքիան, գոնէ Էդիրնէն և կամ Դիւմիւլջինէն կզատենք, գոնէ Էդիրնէի բերդերը փլցնել կուտանք։ Եւ կամ գոնէ մէկ կերպ մը կը գտնենք, ու եթէ ոչ հիմա, գոնէ ժամանակ մը վերջ Էդիրնէն բուլգարներուն տալու մէկ միջոցը կը գտնենք»։

Ահա մենք Էդիրնէի չէզոքութեան խնդիրը իբր այս կերպ մտածումի վերաբերեալ իրողութիւն մը կընդունինք։ Էդիրնէն չէզոք վիճակի մը վերածելը ան կը նշանակէ, թէ երկու կողմի զինուորները հոն պիտի կանչուին, Էդիրնէի բերդերը պիտի փլցուին, ու երբ առօրեայ սովորական կեանքը վերսկսի, ու մեզմէ տասը անգամ աւելի արագ զօրահանութիւն ընող Բուլգարիա օրին մէկը պիտի գրաւէ այդ տեղը։ Այն ատեն դարձեալ զինուոր պիտի ղրկենք։ Եւ քանի օրէն ու քանի ամիսէն պիտի բերենք, և հիմա, երբ մեր ամբողջ բանակը պատերազմի դաշտին վրայ կը գտնուի, և մեր զինուորներուն բարոյական կորովը կատարեալ է, ու Էդիրնէն փրկելու չպիտի դիմանանք, ան ատեն պիտի ձեռնարկե՞նք ասոր։ Բուլգարներն այն ատեն կատարուած իրողութեան առջև պիտի դնեն մեզ, ու մենք ալ ասոր փոխարէն գլուխնիս պիտի շարժենք ու յուսահատական կերպով մը «Աստուած պատճառ եղողներուն սանկ-նանկ ընէ» ըսելէ վերջ ձայներնիս պիտի կտրենք։

Ոչ, ոչ, ահա ի բոլոր սրտէ կըսենք։ Իր յաջորդներուն յաւիտենական անէծքին պիտի արժանանայ և այս երկրին դէմ դաւած պիտի ըլլայ, դարձեալ պատերազմիլ չուզելուն համար Էդիրնէի մասին այսպիսի պայմանի յանձնառու եղող կառավարութիւն մը։

Եթէ ի նկատի ունենանք Քեամիլ-փաշայի կաբինէտի այս օրերս կատարված բանի տապալումը, ապա մեզ համար պարզ կը լինի, թէ վերև առաջ բերված յօդուածը անկեղծ արտայայտութիւնն է օսմանեան մայրաքաղաքում տիրող որոշ տրամադրութեան և չէ գրված յետին մտքով՝ նպատակ ունենալով եւրոպական հասարակական կարծիքը մոլորեցնել։

⁂

Մեր ընթերցողներն անշուշտ գիտեն, որ Կ. Պոլսում հրատարակվում է գերմաներէն մի թերթ, «Օսմանիշէր Լլոյդ», որը նուիրված է գերմանական շահերին Թիւրքիայում, և որ սաստիկ ցանկացող էր Քեամիլ-փաշայի կաբինէտի տապալման։ Այդ թերթը, թիւրք մամուլի մէջ նկատված հակակառավարական ոգին ակնարկելով գրում է հետևեալ տողերը, որ առաջ ենք բերում քաղելով դարձեալ «Մանզումէի Էֆքեարից».

Դահլիճը վերջին օրերու բնաւ իրեն նպաստաւոր մամուլ չունի։ Գրեթէ բոլոր թիւրք լրագիրները կը հետևին նախ և առաջ իթթիհադական «Ինթիխաբը Էֆքեարի» հռչակած նշանաբանին, թէ կառավարութիւնը պարտաւոր է հաշտութեան խնդրոյն մէջ իր բռնած վարանոտ և անորոշ ընթացքին համար։ Նոյն իսկ ազատական «Իկդամ» դահլիճին ի նպաստ ուրիշ բան չի գտներ ըսելու, եթէ ոչ սա, թէ Քեամիլ-փաշայի համար յաջորդ մը գտնելը դժուար պիտի ըլլայ։ «Թանզիմաթի» մէջ Լութֆի Ֆիքրի-բէյ կը յայտարարէ, թէ Քեամիլ փաշայի դահլիճը սահմանադրական շրջանի բոլոր մինչև հիմակուան դահլիճներուն ճակատագիրը ունի։ Դահլիճին մէջ միութիւն չկայ և իր անկումը ժամանակի պարզ խնդիր մըն է միայն։ Լութֆի Ֆիքրի-բէյ յետոյ կը հարցնէ, թէ ներկայ կառավարութեան ժառանգութիւնը ո՞վ պիտի ուզէ ստանձնել։ Եւ ինք կը պատասխանէ, թէ նոր դահլիճը պէտք է երիտասարդներէ բաղկանայ։ Անոր գլուխը պէտք է գտնուի այնպիսի մարդ մը, որ նախանձի և հակառակութեան ոգիէ զերծ ըլլայ, և հանրային բարօրութեան նուիրէ անձնական շահերը։ Իբրև ասանկ մարդ մը ցոյց կուտայ Ղազի-Ահմէդ Մուխթար փաշան. Երիտասարդները պէտք չէ զատել, խտրութիւն դնելով ազատականներու և իթթիհադականներու միջև, այլ ընտրութիւն կատարել, նկատի ունենալով անոնց անձնական բարեմասնութիւնները և ընդունակութիւնները։ Այս նոր դահլիճին առաջին պարտականութիւնը պէտք է ըլլայ, կըսէ, սահմանադրութեան հանդէպ իր հաւատարմութիւնը ցոյց տալ, վերցնելով պաշարման վիճակը և պատերազմական ատեանը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Կարաեաղուբ (Եօզղատ), 20 դեկտ.—Շաբան-օղլի Մէհմէդը, մեր գիւղի թիւրք ազգաբնակութիւնից, որը, հին ռէժիմի ժամանակ այնքան վնասներ է հասցրել հայ գիւղացիներին, շարունակում է իր չարագործութիւնները ներկայ ռէժիմի ժամանակ էլ։ Վերջերս, նա գրգռեց թիւրք ազգաբնակութիւնը և գլուխ կանգնած նրանց՝ յարձակում գործեց հայերի վրայ, որոնք պատրաստվում էին փորել ջրի ճանապարհ։ Սրերի, կացինների և այլ գործիքների օգնութեամբ թիւրքերը վիրաւորեցին բազմաթիւ հայերի։ Դրանցից մի քանիսի գանգերը և ծնկները ջախջախված են։

Ցաւահարված հայերը ամբողջ օրերով փակված մնացին իրանց տներում, զուրկ ամեն բանից։

Չը նայելով որ այդ փաստերը ծանուցվում են իշխանութեան, սակայն նա անտարբեր է մնում։

—

Թօքաթ, 19 դեկտ.—Գէորգ Քէհեաեան, Օհան Քէհեաեանի որդին, Եօզղատից, որը առևտրական գործերով Եօզղատից Բօղազլու էր գնում, սպանվեց առանց պատճառի ռէժիի պաշտօնեաների ձեռքով։

—

Կարա-Քիլիսէ, 6 դեկտ.—Մի քանի օր է, որ մեր տեղի մահմեդականները չափազանց գրգռված՝ երեք անգամ փորձ արին կոտորել հայերին։ Նրանք քանի անգամ հրացաններ դատարկեցին. օֆիցերների խորհրդով, յետ կանգնեցին այդ միջոցին իրանց դիտաւորութիւնից։ Սակայն մենք համոզված ենք, որ այսօր կամ վաղը նրանք այնուամենայնիւ ի կատար կածեն իրանց դիտաւորութիւնը, որովհետև նրանք սկսեցին բամբասանքներ թափել հայերի գլխին, որ իբր թէ սրանք ռուսով զինված՝ ուզում են յարձակում գործել զօրանոցի վրայ։ Շրջանիս հայերը սարսափահար դրութեան մէջ են։

—

Բիթլիս, 10 դեկտ.—Նորերս Բէզազի շուկայում, որ գտնվում է մեր տեղում, ականատես եղանք մի զարհուրելի իրարանցման։ Թիւրքերը չափազանց գրգռված՝ պատրաստվել էին յարձակում գործել հայերի վրայ։ Թիւրք ազգաբնակութիւնը ահագին թւով խռնվել էր ռուսահպատակ Պետրոսի տան առաջ, ուզենալով տանից դուրս հանել նրան և պատժել նրա համար, որ նա մի քանի օր առաջ համարձակվել էր, մի թիւրքի հետ վիճաբանելիս, պատասխանել այն հայհոյանքներին, որ սա ուղղել էր նրա հասցէին։ Շրջանիս թիւրքերը չափազանց գրգռված են և մի առիթ են պտրում հայերի վրայ յարձակում գործելու համար։

—

Բաբերդ, 18 դեկտ.—Մենք ենթակայ ենք նոր վտանգների շնորհիւ տգէտ և դաժան գործակալների մեքենայութիւնների։

Տեղիս հայ ազգաբնակութիւնը անդադար ենթարկված է գիշերային հրաձգութեան, վիրաւորումների և յարձակումների։ Մինչև անգամ օրը ցերեկով մահմեդականները ամեն տեսակ հայհոյանքներ են թափում հայ անունի վրայ։ Մենք բոլորս էլ հաւատում ենք կոտորածների դժբաղդ օրերին։ Ահա մի շաբաթ է, ինչ այստեղի թիւրքերը կատաղելապէս գրգռված են այն բանից, երբ նրանք կարդում են լրագիրների մէջ նորութիւններ «Հայաստանի» բարենորոգումների մասին։ Ամեն օր մի որևէ բանի պոչից բռնում են, որպէս զի մի աղէտի հասցնեն։

Ոստիկանութիւնը վստահելի չէ։

Նահանգական իշխանութիւնը կատարելապէս անգործ է։

—

Կ. Պոլիս, 29 դեկտ.—Ռէջէբ անունով մի թիւրք ամսիս 10-ին բռնի ուժով տարաւ բալաթցի Խաչիկի 16 տարեկան աղջկան՝ Հայկանուշին։

—

Վան, 12 դեկտ. — Ազգաբնակութիւնը պաշտպանելու համար Կարկառ ուղարկված ժանդարմները և զինւորները, տեսնելով բարձի թողի արված գիւղերը, օգտւում են քաղում այդ առիթից և խուզարկելով տների դռները ներս են խուժում և կողոպտում են ամեն ինչ։ Նրանք յափշտակեցին ձեռքն ընկած ամեն ինչ՝ ալիւր, պանիր, կանանց զարդարանքներ և այլն։

Քաջալերված կառավարութեան բռնած դիրքից՝ քիւրդերը ամսիս 2-ին սպանեցին Կարկառում բերկրեցի հայ Ասլանին։

Տահմանցի Հաջի Հուսէյին Աղայի եղբօր՝ Ջաֆարի կազմակերպած և առաջնորդած աւազակախումբը յարձակում է գործում Կավաշից Կարճկան եկող ճանապարհորդների վրայ։ Սակայն շնորհիւ հայերի դիմադրութեան՝ ճանապարհորդները ողջ և առողջ հասնում են տեղ։

Ժանդարմների վարմունքները աւելի ևս անտանելի են։ Դրանք խուզարկում են իրանց հանդիպող բոլոր հայերին, ծեծում են նրանց և պահանջում են նրանցից հացի և ուտեստի պաշարներ։

Ամսիս 2-ին մի անմեղ հայ բանտարկվեց։

Այդ բոլոր փաստերը տեսնելով՝ կառավարութիւնը, փոխանակ իրական և կըտրուկ միջոցների դիմելու, յատուկ առաքեալների միջոցով համաձայնութեան քարոզներ է տալիս...

Վերջերս հալածանք է սկսել Աղթամարի վանքի Դանիէլ աբեղայի դէմ, նոյնպէս և լուսարար Յովսէփի դէմ։

Աղթամարի վանքը հալածանքների առարկայ էր դարձած հին ռէժիմի ժամանակը նոյնպէս։ Դրանք նորոգվում են այսօր, որովհետև մեր շրջանում են տեղի ունեցել և շարունակվում են կատարվել սպանութիւններ, աւազակութիւններ և այլն, համաձայն մի կազմակերպված նախագծի։

Հալածանքների նպատակն է խեղդել մեր անընդհատ գանգատները։

—

Սղերդ, 21 դեկտ.—Մէհմէդ Էմինը, որը ուժով փախցրեց Երանոսի (ներկայումս պատերազմի դաշտում) կնոջը՝ Փէրօյին, ման է ածում 15 օր շարունակ մահմեդական տներում։ Հակառակ օրէնքի, որն արգելում է իսլամացնել այն կանանց, որոնց ամուսինները զինուորական ծառայութեան մէջ են գտնվում, վերոյիշեալ կինը մեզ չը վերադարձվեց։

Մէհմէդ Էմինը իմաց տուեց Էֆրօնի քրիստոնեաներին, որ եթէ իրան չը թողնեն իր փախցրած կնոջը, նա կոչնչացնի 9 հայ գիւղեր։

Գիւղացիները ապարդիւն կերպով դիմեցին իշխանութեանը։

—

Մուշ, 30 նոյեմ.—Երէկ ուսուցիչ Սեդրակ Եղիազարեանը իր տունը գնալու միջոցին յարձակման ենթարկվեց և սպանվեց քիւրդերի ձեռքով, որոնք վերցրին նրա մօտ գտնված դրամները։

—

Սղերդ, 1 նոյեմբ.—Բերվարիի շրջանում գտնվող Ակուշ գիւղի բնակիչ Կիրակոս Աբրահամեանը և իր երկու որդիքը սեպտ. 24-ին իրանց գիւղից կէս ժամ հեռու գտնվող անտառն են գնում փայտ կտրելու։ Նրանց աշխատութեան միջոցին՝ Ակիմ, Հակիմ, Ալօ, Ջաֆէր և Ջիթօ անուն քիւրդերը յարձակվում են նրանց վրայ և Կիրակոսին սպանում են։ Նրանք կը սպանէին և նրա երկու որդիներին, բայց սրանք փախչելով կարողանում են ազատվել։

—

Վան, 27 հոկտեմբ.—Կարկառի և Սօկուի քիւրդերը շարունակաբար երեք անգամ յարձակում գործեցին հայաբնակ Խերսխոտէց գիւղի վրայ։ Հայերը պաշտպանվեցին և սպանեցին յարձակվող քիւրդերից չորսին։ Սպանվածների թւումն է նաև նա, ով նախապատրաստել էր ուսուցիչ Ռաֆայէլ Երեզեանի և Մարտիրոս քահանայի սպանութիւնները։

Հայ հասարակութիւնը սարսափահար դըրութեան մէջ է գտնվում։

—

Սղերդ, 1 նոյեմբ.—Ահա երեք ամիս է, ինչ Օչիմ հայ գիւղի բնակչութիւնը պաշարված է և չէ կարողանում դուրս գալ իր գիւղից։ Քիւրդերն ու տեսեղները գրաւել են գիւղի ազգաբնակութեան ունեցած ամբողջ սերմը, ինչպէս և տաւարը։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 24 դեկտեմբերի

Այն ժամանակ, երբ եւրոպական լրագիրներում յուզվում է հայկական հարցը և յոյս է ծնել, որ մի արիւնաքամ, մարտիրոս ժողովրդի գոյութեան հարցը կը գրաւէ դիւանագիտական աշխարհի ուշադրութիւնը, երբ Կ. Պոլսում էլ թիւրք կառավարութիւնը, գուշակելով ապագան, փութկոտութիւն է ցոյց տալիս բարենորոգումների հարցը առաջ մղելու և ցոյց տալու Եւրոպային, թէ ահա բարենորոգումների լուրջ սկզբնաւորութիւն եղել է, այդ ժամանակը, ասում եմ, տեսէք թէ Վասպուրականի գաւառներում ի՜նչ գազանութիւններ են լինում նոյն իսկ թիւրք ոստիկանների ձեռքով, որոնց միջոցով պիտի կատարվեն և բարենորոգումները Թիւրքիայում։

Նախորդ թղթակցութիւնովս գրել եմ, որ Կարկառի դէպքից յետոյ՝ կառավարութիւնը զօրքերի և ժանդարմների խումբեր ուղարկել էր նոյն գաւառը՝ հաջի Եակուբին և ընկերներին սպանող հայերին ձերբակալելու և թէ երկու ժողովուրդների միջև ուրիշ հաւանական դէպքեր արգիլելու. չը նայած որ այնտեղ ուղարկված թիւրք քննիչներն էլ, որոնք վերադարձել են, վկայում են, որ աշխարհի ամենաթշուառ ու ստրուկ ժողովուրդը գտնվում է Կարկառում, որ տեղացի հայ ժողովուրդը ոչ մէկ մասնակցութիւն չէ ունեցել հաջի Եակուբի և ընկերների սպանութեան գործում, որ արդիւնք է միմիայն հայ ֆէդայինների կողմից կատարված վրէժխնդրական մի ակտի՝ Ռաֆայէլի սպանութեան պատճառով, այնուամենայնիւ ժանդարմները թոյլ են տուել իրանց Խրօրդենց գիւղում, ուր սպանութիւնը գործվել էր, նաև դրացի հայ գիւղերում դռները խորտակել, յափշտակել անասուններ և ուրիշ իրեղէններ ու կալանաւորել անմեղ գիւղացիների, որի պատճառով մի խումբ հայ երիտասարդներ փախել են լեռները, ժանդարմների ձեռքը չընկնելու և զուր չարչարանքներ չը կրելու համար։

Ստորին Կարկառ գաւառի Եղիգէս, Ուրեզ, Զէոր և Ցառղու հայ գիւղերումն էլ, որոնք գտնվում են Բաղէշի կուսակալութեան սահմանում, թիւրք ժանդարմերիան գործում է աւելի սանձարձակ և լրբենի կերպով. սրանք հայերի տներում զէնքեր որոնելու պատրուակով հայերի տները մտնելիս՝ կաշառքներ են վերցրել, իրեղէններ խլել և կիներ բռնաբարել. Ցառղու գիւղում Մելքոն անունով մի մարդու կինը մերկացրած՝ դիւային քըքիջներ են արձակել և ապա բռնաբարել, իսկ Մելքոնին մի ուրիշ ընկերի հետ կալանաւորել, ուղարկել են կառավարութեան կենտրոնը, նրանց վրայ կապելով իբրև թէ նրանց տներում գտնված զէնքերը։

Նոյն գազանութիւնները նաև Բերկրի գաւառի Գիւզակ գիւղում, ուր ժանդարմները գնացել էին փախստական հայ զինուորացուներ փնտռելու, որոնք ծեծում, հայհոյում են, լպիրշ ակնարկներ ուղղում դէպի կանայք և Առաքել անունով մի մարդու բռնում են, նրա ձեռք ու ոտքը կապում և կախում առաստաղից գլխիվայր. թշուառ մարդը մնում է այնպէս մի ժամի չափ, մինչև որ դրացիները գալով ազատում են նրան մահից։ Գաւառակի մեւդիրը, որին դիմում են գիւղապետն և գաւառի փոխանորդ Մանուէլ քահանան բողոքով, ոչ մի կարևորութիւն և ընթացք չէ տուել գործին, իսկ այժմ էլ ստում է կատարված իրողութիւնը։

Մի ուրիշ այսօրինակ գազանութիւն էր գործել Աղբակի գաւառում ժանդարմական մի օֆիցեր՝ Շէֆքը էֆ.։ Նա գետին պառկեցնել էր տուել Ս. Բարդուղիմէոս վանքի փոխ-վանահայր Մատթէոս քահանային և նրա ոտները փակերի մէջ պրկելով փայտի հարուածներ իջեցրել նրա ներբաններին, այնպէս որ թշուառ քահանային շալակով փոխադրել են իր տունը։

և այդ անարգ ծեծը նրա համար, որ նա յանդգնութիւն էր ունեցել արգելել վանքի ծառաներին, որ տարապարհակ աշխատեն ժանդարմներին. քահանան բողոք էր տուել դատարանին այս բարբարոսութեան համար, բայց դատարանը արդարացրել է օֆիցէրին. միայն պատիժը գործադրող ոստիկանին դատապարտել է հազիւ 15 օրվայ բանտարկութեան, որից քահանան անբաւական մնացած՝ դիմել է վերաքննութեան։

Մտրակ

ՊԱՐԻԶԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Հանրապետութեան նոր նախագահի ընտրութիւնը

Պարիզ, 5/18 յունվարի

Երէկ, յունվարի 4/17-ին, տեղի ունեցաւ Վէրսալյում, կոնգրէսի կամ ազգային ժողովի ձեռքով ֆրանսիական հանրապետութեան նոր նախագահի ընտրութիւնը։

Եւ, ինչպէս հեռագիրները արդէն հաղորդած կը լինեն, հանրապետութեան նոր նախագահ ընտրվեց Րայմօնդ Պուանկարէն, ֆրանսիական այժմեան կաբինէտի նախագահը։

Ընտրողների (պարլամենտի պատգամաւորների և սենատօրների) ընդհանուր թիւն էր 871 հոգի։

Արդ, Պուանկարէն ընտրվեց 483 քուէներով։ Հետևեալ աւելի շատ ձայն ստացողն եղաւ Պամսը, որ Պուանկարէի կաբինէտի մէջ երկրագործութեան մինիստր է. նա ստացաւ 296 քուէ։ Իսկ սօցիալիստների կանդիդատ Վայանը ստացաւ միայն 69 քուէ։

Անհնարին է նկարագրել այն մեծ իրարանցումը, աշխուժութիւնը, յուզմունքը, որ վերջին 2—3 օրերը տիրում էր Պարիզում, քաղաքական շրջաններում և մամուլի մէջ։

Իմ նախորդ նամակի մէջ ես յայտնել էի, որ հանրապետութեան նախագահի պաշտօնի համար հանրապետականները, պատկանող զանազան գունաւորումների և ճիւղերի, ունէին երկու կանդիդատ՝ Րիբօ և Պուանկարէ, երկուսն էլ ծերակուտական (սենատօր) և ակադեմիկոս (անդամ ֆրանսիական ակադեմիայի)։ Հանրապետականները ամենից առաջ կանգ էին առել Լէօն Բուրժուայի վրա, որ Պուանկարէի կաբինետի մէջ հասարակական աշխատանքների մինիստր է, բայց չը նայելով բոլոր դիմումներին և թախանձանքներին, չը նայելով որ ինքը Պուանկարէն քանիցս դիմել և խնդրել էր յանուն հանրապետութեան միութեան և գերագոյն շահերի՝ հանդէս գալ ի բրև կանդիդատ, Լ. Բուրժուան վճռապէս մերժել էր։ Եւ նրա կտրական մերժումից յետոյ միայն Ր. Պուանկարէն, իր բարեկամների խորհրդով, որոշեց դնել իր կանդիդատութիւնը, թէև սկզբում խոստացած է եղել պաշտպանել Րիբօյի կանդիդատութիւնը, Լ. Բուրժուայից յետոյ։ Սակայն շատ հանրապետականների կարծիքով՝ Րիբօյի ընտրութիւնը չէր կարող ապահովել հանրապետութեան միութիւնը, ուստի և Պուանկարէն ստիպված էր դնել իր կանդիդատութիւնը, թէև սկզբում խոստացած է եղել պաշտպանել Րիբօյի կանդիդատութիւնը։

Բայց նա իր դէմ ունէր երկու սոսկալի հակառակորդներ՝ նախկին մինիստր-նախագահ Կոմբը և յայտնի գործիչ Կլէմանսօն։

Եւ սկսվեց մի անաւոր կռիւ, մի կատաղի պայքար։ Կլէմանսօն, տեսնելով որ Րիբօյի ընտրութիւնը չը պէտք է աջողվի, սկսեց առաջ քշել մի նոր կանդիդատութիւն և Պուանկարէի հակառակորդ դուրս եկաւ Պամսը, իր ընկերակիցը, իր կաբինէտի մի անդամը, որ վարում է երկրագործութեան մինիստրի պաշտօնը։ Արդ, Պամսը չէր կարող լինել հակառակորդ ըստ ուղղութեան, որովհետև ամբողջ մի տարի լինելով անդամ Պուանկարէի նախագահութեամբ գործող մինիստրութեան՝ նա համամիտ էր այդ մինիստրութեան գծագրած և վարած քաղաքականութեան, թէ ներքին և թէ արտաքին։ Ուրեմն ուղղութեան և քաղաքականութեան տարբերութեան և հակառակութեան մասին խօսք լինել չէր կարող, այլ լոկ անձնական համակրութեան կամ հակակրութեան խօսք։ Եւ այդպէս, Կլէմանսօն, առաջ քշելով Պամսի կանդիդատութիւնը, ինչպէս ցոյց են տալիս լրագիրներից շատերը, ղեկավարվում էր միայն անձնական նկատումներով. նա դէմ լինելով Պուանկարէին՝ աշխատում ամեն կերպ տապալել նրա կանդիդատութիւնը։ Ասել թէ Պամսը առանձին արժանիքներ ունի—դժուար է. գոնէ ես չը կարողացայ մինչև այսօր, մօտ 20 օրվայ ընթացքում, որ Պարիզումն եմ գտնվում, կարդալով լրագիրները, իմանալ այդ արժանիքների մասին, բացի նրանից, որ Պամսը արհի-միլիօնատէր է, ուրեմն խոշոր կապիտալիստ է (գործարանատէր) և բնաւորութեամբ շատ մեղմ և վարվող, մինչ Պուանկարէն՝ իր թունդ, կոշտ, կտրուկ բնաւորութեամբ շատերին զինաւորել է իր դէմ։ Սակայն Պամսի հարստութիւնը և մեղմ, քաղցր բնաւորութիւնը աւելի ի վնաս նրա արժանիքներն է, քան յօգուտ. նախ՝ լուրեր էին պտտում—գուցէ և անհիմն—որ եթէ Պամսը յաղթող հանդիսանայ և ընտրվի հանրապետութեան նախագահ, այդ՝ շնորհիւ իր միլիօնների կը լինի. ուրեմն կամենում էին ասել, թէ նա իր ընտրութեան աջողութեան համար դրամ է ծախսում, ինչպէս անում են կանդիդատները Ամերիկայում. երկրորդ՝ նրա մեղմ և վարվող բնաւորութիւնը ցոյց է տալիս, որ նա գիտէ ամենքին սիրաշահել, և դրա համար չունի հակառակորդներ. բայց այդ հանգամանքն էլ ցոյց է տալիս միայն, որ նա չունի տևուն, աննկուն համոզմունք և ուղղութիւն, մինչ Պուանկարէի բազմաթիւ հակառակորդներ ունենալը պարզ ապացոյց է, որ նա ունի մեծ արժանիքներ, որովհետև միայն մեծ արժանիքների, աննկուն համոզմունքի, անխախտ ուղղութեան տէր անձինք կարող են յարուցանել իրանց դէմ սաստիկ թշնամութիւն և ջերմ համակրութիւն։

Եւ, արդարև, Պուանկարէն այդ տեսակ անձերիցն է։ Նա ունի թունդ համակրողներ և ոխերիմ թշնամիներ։ Ուստի և մեծ երկիւղ կար, որ, ինչպէս յաճախ պատահում է, պայքարի ժամանակ, այդպիսի անձինք զոհվում են և յաղթանակը տանում են միջակ արժանիքների և նոյն իսկ դեռ մի քանի ժամ առաջ անյայտ անձինք, այս անգամ էլ Պուանկարէն զոհվէր, և յաղթանակը տանէր մի այլ անձն, որի մասին կամ բոլորովին չէր մտածվում, կամ շատ քիչ էր մտածվում։

Եւ ունենալով իր դէմ գործող այնպիսի զօրեղ հակառակորդ, որպիսին է Կլէմանսօն, քիչ մնաց, որ Պուանկարէի ընտրութիւնը տապալվէր և հանրապետութեան նախագահ ընտրվէր կամ միջազգային աշխարհին անյայտ և կապիտալիստ Պամսը կամ Դէշանէլը։

Կլէմանսօյի և Կօմբի ջանքերով ընտրութիւնից երկու օր առաջ սենատի շէնութեան մէջ տեղի ունեցաւ նախապատրաստական մի մեծ ժողով՝ կանդիդատներ որոշելու համար։ Այդ ժողովին հրաւիրված էին հանրապետական միութեան պատկանող բոլոր խմբակցութիւնները, որոնց մէջ և սօցիալիստները, ուրեմն բոլոր ձախակողմեան խմբակցութիւնները և կուսակցութիւնները. չէին հրաւիրված միապետականները, կղերականները, այն է՝ աջակողմեանները։ Սակայն սօցիալիստները չէին եկել այդ ժողովին, այնպէս որ ներկայ էին ընդամենը 633 սենատօրներ և պատգամաւորներ։

Այդ ժողովի նպատակն էր նախնական քուէարկութեամբ պարզել, թէ կանդիդատներից ով աւելի շանս ունի։ Կատարվեց երկու անգամ քուէարկութիւն. առաջինը ցոյց տուեց, որ Պուանկարէն ստացել է 180 ձայն, Պամսը՝ 174 ձայն, սենատի նախագահ Դիւբոստը՝ 107, պարլամենտի նախագահ Դէշանէլը՝ 83, Րիբօն՝ 52։

Որովհետև ոչ ոք բացարձակ մեծամասնութիւն չէր ստացել, ուստի կատարվեց երկրորդ քուէարկութիւն, որ տուեց այս արդիւնքը։ Քուէարկողների թիւն էր 620. Պամսը ստացաւ 283 ձայն, Պուանկարէն՝ 272, Րիբօն՝ 25, Դէշանէլը՝ 22։

Որովհետև այս անգամ էլ ոչ ոք բացարձակ մեծամասնութիւն չունեցաւ (բացարձակի համար պէտք էր ստանալ 324 ձայն), բայց ակնյայտ դարձաւ, որ լուրջ կանդիդատներ երկու հոգի են միայն—Պամս և Պուանկարէ—ուստի և միւս կանդիդատները՝ Րիբօ, Դէշանէլ, Դիւբոստ շտապեցին յայտարարել, որ բոլորովին յետ են վերցնում իրանց թեկնածութիւնը, որով հրապարակի վրա մնացին միայն Պամս և Պուանկարէ։

Կլէմանսօն և իր խումբը կարծում էին, որ յաղթութիւնը իրանք են տանելու, քանի որ այդ նախնական քուէարկութեան ժամանակ Պամսը աւելի ձայն էր ստացել։ Ուստի փորձեցին երրորդ անգամ կրկնել քուէարկութիւնը, որ տեղի ունեցաւ դարձեալ սենատում, հինգշաբթի, 3/16 յունվարի։ Այդ երրորդ անգամ քուէարկողների թիւն էր 646։

Արդիւնքը հետևեալն եղաւ. Պամսը ստացաւ 323 ձայն, Պուանկարէն՝ 309 ձայն։

Բացարձակ մեծամասնութիւն ստանալու համար պէտք էր ունենալ 324 ձայն, ուրեմն Պամսը միայն մի ձայն պակաս ունէր, մինչ Պուանկարէն 15 ձայն պակաս ունէր։

Եւ Կլէմանսօյի ու խմբի ուրախութիւնը կատարեալ էր. կարծելով որ յաղթանակը տարել են, նրանք կազմեցին մի պատգամաւորութիւն և ներկայանալով Պուանկարէին՝ պահանջեցին յանուն հանրապետական միութեան, որ նա հրաժարվէ իր կանդիդատութիւնից յօգուտ Պամսի։

Սակայն Պուանկարէն մերժեց վճռողապէս, յայտարարելով որ որոշել է մինչև վերջին ծայրը գնալ և յանձնում է իրան ֆրանսիական ազգի վճռին, որ պէտք է արտասանէ ազգային մեծ ժողովը Վէրսալյում։

Հ. Առաքելեան

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. Ե. ԼԱԶԱՐԵԱՆ

—

Յունվարի 12-ին, երեկ. ժամը 6-ին, կարճատև, բայց ծանր հիւանդութիւնից (թոքերի բորբոքում) յետոյ Թիֆլիսում վախճանվեց գեներալ-մայոր Ալէքսանդր Յովհաննէսեան Լազարեանը։

Հանգուցեալը ռուս-թիւրքական պատերազմի հերոս գեն.-ադ. Յովհաննէս Դ. Լազարեանի որդին էր և ծագումով Ղանձակի նահանգի ազնուականներից։ Ծնվեց նա 1858 թ. մայիսի 6-ին։ Պատանի հասակում նա ուղարկվեց Մոսկվա, ուր մտաւ 1-ին զինւորական գիմնազիան։ Աւարտելով գիմնազիան՝ Ալէքսանդրը մտաւ Նիկոլայեվեան հեծելազօրի դպրոցը և վերջացրեց առաջին աստիճանով 1878 թ.։ Կորնէտի աստիճանով Լազարեանը ընդունվեց Նորին Կայսերական Մեծութեան ուլանի պալատական գունդը, ուր մնաց 15 տարի։

Կորնէտ Լազարեանը ուղարկվեց մասնակցելու Ախալ-Թէկինի արշաւանքին, որից յետոյ նա աստիճանաբար առաջ գնաց։ 1893 թ. նա նշանակվեց պաշտօնեայ կովկասեան զօրքերում, իսկ 1904 թ. հանգուցեալը դարձաւ գնդապետ. 1905 թ. նշանակվեց առանձին յանձնարարութիւնների աւագ օֆիցէր Կովկասի փոխարքայի մօտ։ 1910 թ. Ա. Լազարեանը իր գերազանց ծառայութեան համար դարձաւ գեներալ-մայոր, իսկ անցեալ տարվայ հոկտ. 21-ին պարգևատրվեց 3-րդ կարգի Վլադիմիրի շքանշանով։

Հանգուցեալը մեռաւ 54 տարեկան հասակում մեծ ցաւ պատճառելով իրան ճանաչողներին։ Իբրև հայ՝ հանգուցեալը չէր խնայում իր հնարաւոր օգնութիւնը իրան դիմող ազգայիններին։

Հանգուցեալը ամուսնացած էր վրացուհու հետ և թողեց մի աղջիկ զաւակ։

—

Յունվ. 13-ի երեկ. ժամը 7-ին հանգուցեալ գեներալի բնակարանում կատարվեց առաջին հոգեհանգիստը, որին ներկայ գտնվեցին կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնա Վորոնցով-Դաշկովան, փոխարքայի երկու օգնականները, գեներալիտետը, փոխարքայի խորհուրդը, նահանգապետը, քաղաքագլուխը, զօրամասի ներկայացուցիչներ և բազմաթիւ անձեր հանգուցեալի յիշատակը յարգողներից։

Յունվ. 14-ին հանգուցեալի դագաղի վրա կատարվեցին երկու հոգեհանգիստ, մինը ուղղափառ, միւսը հայ հոգևորականի ձեռքով։ Ներկայ էին կոմսուհին, փոխարքայի օգնականները, փոխարքայի դիւանապետը, խորհրդի անդամները, գեներալիտետը և շատ հասարակութիւն։

Հանգուցեալի դագաղի վրա դրվեց արծաթեայ պսակ փոխարքայի և իր ամուսնու կողմից։

Երէկ տեղի ունեցաւ հանգուցեալի յուղարկաւորութիւնը բնակարանից՝ Միքայէլեան փողոցից դէպի Վանքի աւագ եկեղեցին։ Դագաղը դուրս բերին զինւորականները։ Սգերթի առջից գալիս էին զօրքերը։

Եկեղեցում պատարագիչն էր Եփրեմ սրբազանը. երգում էր քառաձայն խումբը։ Մինչև վերջ եկեղեցում մնաց կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնան։

Եկեղեցու բակը և շրջակայ տեղերը լի էին մեծ բազմութեամբ, որի մէջ աչքի էին ընկնում պաշտօնական անձինք։ Թաղման սգահանդէսին բացի կոմսուհի Վորոնցով-Դաշկովայից ներկայ էին փոխարքայի երկու օգնականներ՝ գեներալ Շատիլով և սենատոր Վասացի, հոֆմէյստեր Պետերսոն, գեներալիտետը, զօրամասերի հրամանատարներ, փոխարքայի խորհրդի անդամները in corpore և զինւորական ու քաղաքացիական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, ինչպէս և այլազգի հիւպատոսները։

Եկեղեցում աւուր պատշաճի դամբանական խօսեց Բենիկ վարդապետը՝ գրուատելով Լազարեան տոհմի մատուցած խոշոր ծառայութիւնները ռուսական պետութեան և մասնաւորապէս հերոս Յովհաննէսի որդի Ալէքսանդրի գաղտնի օգնութիւնները, որ նա ցոյց տուեց իր կենդանութեան ժամանակ կարօտ հայերին։

Դագաղը եկեղեցու բակում իջեցվեց գերեզման զինւորական պատիւներով։

Թաղման կարգը վերջացաւ ժամը $2\frac{1}{2}$-ին։

Հանգուցեալի դագաղի վրա դրված էր 9 արծաթէ պսակ, որոնց թւում, ինչպէս յիշեցինք, նաև փոխարքայի և կնոջ կողմից։

Հայր Բենիկը իր ճառի մէջ ի միջի այլոց յիշատակեց այն, որ փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը հանգուցեալի այրիին ուղղել է մի նամակ, որի մէջ մեծ ցաւակցութիւն յայտնելով՝ ասում է. «Մեռաւ իմ սիրելի բարեկամը։ Օր աւուր ես նրան աւելի էի սիրում, օր աւուր ես նրան աւելի էի հաւատում ու վստահում։ Մեռաւ իմ բարեկամը, որին ես աւելի էի հետզհետէ գնահատում։ Նրա յիշատակը չի մոռացվի իմ մտքում...»։

Այսպէս ուրեմն գերեզման իջաւ Լազարեան յայտնի տոհմի վերջին հետքը ևս, որովհետև հանգուցեալը արու ժառանգ չը թողեց։

Եա.

ԷԿՍՊՐՈՊՐԻԱՏՕՐՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

1912 թւի սեպտեմբերի 24-ին, Թիֆլիս քաղաքից երեք վերստ հեռաւորութեան՝ Կօջօրի խճուղու վրա, Թիֆլիսից սայլակով գնացող պօստի վրա անյայտ չարագործների կողմից յարձակում էր տեղի ունեցել պօստը կողոպտելու նպատակով, ըստ որում կողոպտիչների ձգած ռումբերից սպանվեցին երեք պահակ և կառապանը, ու վիրաւորվեցին մի պահակ, պօստատարը և միւս կառապանը։ Շնորհիւ վիրաւորված պահակի քաջասրտութեան, որը դիմադրութիւն էր սկսել չարագործների դէմ, և քաղաքի մօտիկութեանը, ուր բնականաբար իրարանցում բարձրացաւ, յարձակում գործողները, չը կարողանալով կողոպտել պօստը, փախուստ տուին և անյայտացան, որոնցից 4-ը Թիֆլիս քաղաքի իրա մէջ։ Իսկ յարձակում գործողների ընդհանուր թիւն էր, պէտք է կարծել, 8 հոգի։

Ցնցիչ ոճրագործութիւնը երևան հանելու նպատակով Թիֆլիսի ոստիկանապետ գեն.-մայոր Ֆ. Ա. Զասիպկինի անմիջական ղեկավարութեամբ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեցին, և հէնց սեպտեմբերի 24-ից անմիջապէս յետոյ առաջին իսկ օրերում խուզարկու ոստիկանութեան բաժանմունքի գլխաւորը ցուցմունք ստացաւ, որ այդ գործի պարագլուխներից մէկը մի ինչ-որ յայտնի ռմբաձիգ-ահաբեկիչ «Գիգօ» մականունով մէկն է, որը մասնակցել է մի ամբողջ շարք ահաբեկչական գործողութիւնների ռումբերով՝ Անդրկովկասում, ապա և Պարսկաստանում, և որ «Գիգօն» Թիֆլիս էր եկել Կօջօրի խճուղու վրա գործված յարձակումից մի քանի օր առաջ միայն և անյայտացել էր սեպտեմբերի 23-ի լոյս 24-ի գիշերը։ Ի նկատի առնելով այն, որ տեղեկութիւն էր ստացված, թէ «Գիգօն» գնացել է Սաղարէջօ գիւղի մօտակայ գիւղերից մէկը, այնտեղ ուղարկվեցին ոստիկանական ագենտներ հետևելու նպատակով։

Միաժամանակ ցուցմունքներ ստացվեցին, որ վերոյիշեալ յարձակումը կազմակերպելուն սերտ մասնակցութիւն է ունեցել տեղացի մի կին և մի երիտասարդ, որոնք նպաստել են անհրաժեշտ իրեր ձեռք բերելու և, ի միջի այլոց, արիւնհոսութիւնը դադրեցնող բամբակ՝ վէրքերի համար։ Նոյնպէս մասնակից է և մի անյայտ պօստային պաշտօնեայ, որը անհրաժեշտ տեղեկութիւններ էր տալիս կողոպտիչների կազմակերպութեանը։ Դրանից աւելի ուշ ստացվեցին ցուցմունքներ, թէ նոյն յարձակման անմիջական մասնակցողներից մէկն է նաև ինչ-որ «Կամօ» մականունով մէկը և նախկին վարչական կարգով աքսորված մի պարոն՝ «Մարտիրոս» անունով։ Խնամքով կազմակերպված հսկողութեանը աջողվեց՝ նշանների հիման վրա՝ փողոցում գտնել յիշեալ կնոջը և հետևել ու պարզել, որ նա ապրում է Սապէօրնայա փողոցի վրա № 14 տանը Մարիա Մայսուրաձէ անունով և որ նրա միևնոյն բնակարանում միասին ապրում է որոնվող մի երիտասարդ, որը դուրս եկաւ, որ դաշնամուրի վրա նուագող է հասարակաց տներից մէկում և ապրում է Տիգրան Վարդանովի անուան անցագրով։ Յետագայ հսկողութիւնները ակներև կերպով պարզեցին, որ Մ. Մայսուրաձէի բնակարանը ներկայանում է գաղտնի ժողովատեղի ոճրագործ կազմակերպութեան անդամների համար։

Կոնսպիրատիվ յարաբերութիւններ ունենալով յիշեալ բնակարանի հետ և նրա վերաբերմամբ սահմանված հսկողութիւնը նկատել էր մի անյայտ «դեղին մարդու», որը, տեղեկութիւնների համաձայն, որոնվող «Գիգօն» էր՝ Գրիգորի Մատիաշվիլին, պլաշչով անյայտ անձ՝ որոնվող Մարտիրոսը, նա ինքը և Մարտիրոս Լօլաձէն, պօստային պաշտօնեան՝ պօստային գրասենեակի պաշտօնեայ Բաղդասար Սաֆարովը և անյայտ «Սև մարդը»՝ սևահեր, բեխերով, առանց միրուքի։

Նոյեմբերի 9-ին յիշեալ կազմակերպութեան մասնակցողները բոլորովին անսպասելի կերպով վախեցել են ինչ-որ, հսկողութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող, երկու անյայտ մարդկանցից, որոնք, յայտնի չէ թէ ինչու յատուկ կերպով կանգնել էին Սապէօրնայա փողոցի № 14 տան դարպասի առջև, և կասկածելով, որ նրանք հսկում են իրանց, փախուստ են տուել և թաքնվել, բայց լրագիրներում լոյս տեսած լուրը կարդալուց յետոյ, թէ նոյն օրը Սապէօրնայա փողոցում դրամաչորթների վրա հսկողութիւն է եղել սահմանված և նրանցից երկուսին գաղտնի ոստիկանութիւնը կալանաւորել է արդէն նոյեմբերի 9-ի երեկոյեան, յիշեալ անձինք նոյեմբերի 14-ից նորից են սկսում յաճախել Մ. Մայսուրաձէի բնակարանը, բացի, սակայն, անյայտ «Սև մարդուց»։

Միևնոյն ժամանակ, ուրիշ աղբիւրից տեղեկութիւններ ստացվեցին, որ սեպտ. 24-ի յարձակման գլխաւոր կազմակերպիչներից մէկը «Կամօն» է եղել և որ դա հէնց ինքն է Միքայէլեան հիւանդանոցի խելագարների բաժանմունքից 1911 թւին փախած յայտնի ահաբեկիչ և Երևանեան հրապարակի վրա ռումբ ձգելուն մասնակցող Սիմէօն Տէր-Պետրոսեանցը, ըստ որում դէմքի նշանները ճշտելուց կարելի էր կարծել, որ դա ինքն է հսկողների յիշած «Սև մարդը», բայց նա արդէն անհետացել էր։

Յետագայ դիտողութիւնները երևան հանեցին էլի մի ամբողջ շարք անձանց, որոնք անմիջական կապ ունէին յիշեալ կազմակերպութեան հետ, բայց «Սև մարդը» այլևս չէր երևում ոչ մի տեղ։

Թիֆլիսի ոստիկանութեան ձեռք առած մի շարք միջոցների շնորհիւ, մի քանի օրվայ հետախուզումից յետոյ, կարելի եղաւ կալանաւորել Թիֆլիսում թիֆլիսեցի Գրիգորի Մատիաշվիլիին («Գիգօ») և Սիմէօն Արշակեան Տէր-Պետրոսեանցին («Կամօ»), որ փախել էր 1911 թւին Միքայէլեան հիւանդանոցից։ Բացի յիշեալ երկուսից քաղաքում խուզարկութիւններից յետոյ ձերբակալվել են նրանց 16 ընկերակիցները, որոնք պատրաստվում էին զինված յարձակում գործել՝ ինչպէս Երևանեան հրապարակի վրա՝ պօստ-հեռագրական գլխաւոր գրասենեակի վրա։

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

—

Պետերբուրգ, 8 յունվարի

Դեկտ. 20-ին բացվեց «Պետերբուրգի արուեստագէտների ընկերութեան» 21-րդ պատկերահանդէսը և պէտք է շարունակվի մինչև փետրվարի 3-ը։ Այստեղ փակվելուց յետոյ ցուցահանդէսը տեղափոխվելու է Մոսկվա, ուր մարտի 3-ին կը բացվի և կը տևի մօտ մի ամիս։ Այս պատկերահանդէսին մասնակցում են թէ վերոյիշեալ ընկերութեան անդամները և թէ կողմնակի էքսպօնենտներ, որոնք ի ցոյց են հանել 420 նկար։

«Մշակի» մէջ իր ժամանակին նկարագրված էին Գ. Բաշինջաղեանի նոր աշխատութիւնները։ Հէնց այդ նկարները, թւով 10 հատ, դրված են ցուցահանդէսում, որոնց մէջ է գտնվում «Արարատը վերջալոյսի ժամանակ» մեծադիր պատկերը, որ իր վրա է դարձրել թէ արուեստագէտների և թէ հասարակութեան ուշադրութիւնը։ Երկար կանգ առաւ այդ նկարի առաջ Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնան, որ գեղարուեստից ակադեմիայի պրեզիդենտն է, և շատ գովաբանեց։ Նոյն ուշադրութեան արժանացրեց Բաշինջաղեանի մի ուրիշ նկարը՝ «Առաջին ձիւնը հայկական գիւղում» վերնագրով։

Այդ ցուցահանդէսին մասնակցում են հռչակաւոր ծերունի Կ. Մակօվսկի մի շարք գեղեցիկ նկարներով, Վոլց, Կոնդրատենկօ, Գէլլեր, Նավօզով, Եգօրնով, Բակալօվիչ յայտնի նկարիչները և մի շարք այլ արուեստագէտներ։ Քանդակագործական մասը, ինչպէս առհասարակ միշտ, աղքատ է թէ քանակութեան և թէ որակութեան տեսակէտից։

Լոյսի բացակայութիւնը շատ է խանգարում ցուցահանդէսի աջողութեանը. օրվայ մեծ մասը պատկերները լուսաւորվում են էլէքտրական լոյսով։

Լ. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ 1913 թւի «Кавказскій календарь»-ից իմանում ենք, որ Կովկասի վարչութեան հաւաքած տեղեկութիւնների համաձայն 1912 թւի յունվարի 1-ին ամբողջ Անդրկովկասի և Հիւսիսային Կովկասի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 11.334,080 հոգի, որոնցից 7.323,025-ը ապրում են Անդրկովկասում։ Անդրկովկասում, չը հաշւելով զօրքը, ռուսների թիւն է 552,163 հոգի, վրացիներ—ուղղափառ և մահմեդական միասին առնելով—1.635,533, բոլոր դաւանութեան պատկանող հայերը միասին առած՝ 1.636,486, շիա և սիւննի մուսուլմանները՝ 3.089,286 հոգի։ Ամուսնացողների ընդհանուր թիւը 1911 թւին եղել է 53,597, ծնվածներ 192,167, որից 89,794-ը աղջիկ։ Մեռնողների թիւը նոյն տարին 110,571 հոգի, որից 59,604-ը տղամարդ։

◆ Ազնուականների պարագլխի ընտրութեանը մասնակցում էին ընդամենը 287 հոգի։ Իշխ. Գ. Ա. Բագրատիօնը ստացաւ 135 սպիտակ ու 152 սև քուէ, մինչդեռ իշխ. Կ. Ն. Աբխազին ստացաւ 235 սպիտակ ու 47 սև քուէ։

◆ Թիֆլիսի կօմէնդանտական վարչութիւնը յայտարարում է Թիֆլիսի բնակիչներին, որ կարող են յետ ստանալ վարչութեանը 1905 և 1906 թ. թ. նախկին գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ ի պահ տրված զէնքերը, ներկայացնելով տրված ընկալագրերը և կրելու իրաւունք։ Տրված է չորս ամիս ժամանակամիջոց։

◆ Թիֆլիսում հիւր գտնվող պրոֆէսոր Բայկօվը աւելի նպատակայարմար է գտնում բանալ Թիֆլիսում առաջին հերթին հանքային ու գիւղատնտեսական բաժանմունքներ ապագայ պօլիտեխնիկումում։ Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձուն պօլիտեխնիկումի հարցի առիթով իր զեկուցագիրը կազմելով է զբաղված, որպիսի զեկուցագիրը՝ հետևանք իր վերջերս Ռուսաստանի զանազան քաղաքներում կատարած ճանապարհորդութեան՝ կը ներկայացվի գլխաւոր կօմիտէտի նիստին ի քննութիւն։ Այդ նիստում որոշվելով վերջնականապէս պօլիտեխնիկումը կառուցանելու տեղը, լուծումն կը տրվի նաև նրա շուրջը գտնվող հողաբաժինները մասնաւոր անձանց վաճառելու հարցին՝ բնակավայրեր հաստատելու համար։

◆ Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը Պետերբուրգ է ուղարկում Ռօմանօվների Տան 300 ամեակի առիթով ամենահպատակ զգացմունքներ արտայայտելու համար Ն. Սիլիքեանին, Ա. Մատուրեանին և Ս. Առաքելեանին։

◆ «Т. Л.»-ին հեռագրում են Բագուից,

որ այնտեղ յունվ. 14-ին առաջին անգամ ս. Նինայի օրը մատուցվել է պատարագ վրացական լեզուով։

◆ Դիլիջանից մեզ գրում են յունվարի 12-ից. «Մօտ օրերս, Ս. Ցարութիւնեանի մասնակցութեամբ կայացած հասարակական ժողովում, որոշվել է հրաւիրել բժիշկ Դիլիջանի, Նոր-Դիլիջանի և Պօղոս-Քիլիսայի համայնքների համար՝ ընդհանուր միջոցներով»։

◆ Զաքաթալայից մեզ գրում են. «Յունվարի 11-ի երեկոյեան քաղաքիս Թիւրքական ճաշարաններից մէկում գնդակի մի հարուածով տեղն ու տեղը սպանվեց Զաքաթալայի շրջանի անտառապետի մօտ ծառայող Թալա գիւղի բնակիչ Ռամազան Աբըլինսկին։ Զարագործը կրակել է լուսամուտից և գնդակը խրվել է կրծքի մէջ։ Սպանվածը շատ մութ անցեալի տէր մարդ էր, ունէր բազմաթիւ թշնամիներ։ Ոչ ոք չէ կալանաւորված առ այժմ»։

◆ Կաղզվանից մեզ գրում են. «Տեղիս ս. Աստուածածին եկեղեցում յունվարի 1-ին հանդիսաւորապէս կարդացվեց Վեհ. Հայրապետի անդրանիկ կոնդակը։ Կոնդակը կարդաց գործակալ Մկ. ք. Տէր-Գրիգորեանը։ Ընթերցումից առաջ գործակալը բացատրեց անդրանիկ կոնդակների իմաստը և նոր կոնդակի բովանդակութիւնը»։

◆ Ստաւրոպոլից մեզ գրում են հետևեալը. «Պետրօվսկի գիւղում Արսէն Քալանթարը, որ նախագահն է տեղական գիւղատնտեսական ընկերութեան, կազմակերպել է ժամանակաւոր կուրսեր հետաքրքրվողների համար։ Կուրսերը կը շարունակվեն 20 օր՝ յունվարի 13-ից մինչև փետրվարի 3-ը, օրական երկու, երեք, իսկ մի քանի դէպքերում չորս դասաւանդումով։ Կուրսերի բացումը նշանակված է յունվարի 13-ին։ Բացի Ա. Քալանթարից, որ կը դասախօսի այգեգործութեան, բանջարաբուծութեան և թռչնապահութեան մասին, կը կարդան Գ. Բասկաչով կաթնատնտեսութիւնից, Ե. Դաւիդով անասնաբուծութիւնից, ձիաբուծութիւնից և խոզաբուծութիւնից, Վ. Դեֆրիօս՝ տաւարապահութեան և ոչխարաբուծութեան, Ն. Սօկոլով՝ գիւղական առողջապահութեան, Ս. Սուրժելով՝ հողագործութեան, Ի. Տիմչէնկօ՝ կօօպերացիաների, Ա. Խանդուրին՝ արմատապտուղների մասին։ Աւարտող աշակերտները կը ստանան նուէր գրքեր, սերմեր և գործիքներ»։

◆ Կօլօպտենից (Սօչիի շրջ.) մեզ գրում են. «1912 թ. մեզ համար վատ տարի էր. ծխախոտն իր ժամանակին չը ծախվեց, աշնանացանը չը վերջացաւ, եղանակները շարունակ ցուրտ, ցեխոտ ու մառախլապատ անցան։ Երկրաշարժը մեզանից ձեռք չէ քաշում. դեկտեմբերի 17-ի ցեր. ժամը 11-ին ուժեղ ցնցում զգացվեց. ապա՝ 17-ի լոյս 18-ի գիշ. ժամը 2-ին տեղի ունեցաւ ահեղ խուլ ղղրդիւնով երկրաշարժ, որը կրկնվեց 18-ի լոյս 19-ը գիշերը վեց անգամ, որոնցից 3-ը իրար ետևից. ամսի 24-ին էլ, ցեր. ժ. 11 և 30 ր. դարձեալ զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած։ Նկատելի է, որ ցնցումից առաջ ամեն անգամ ստորերկրեայ խուլ գոռոց էր լսվում»։

ԳԻՏՈՒԹ., ԳԱՐԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Հին Աստուածները» բեմի վրա

Շանթի «Հին Աստուածներ» պիէսի ներկայացումը գրաւել էր մի այնպիսի մեծ բազմութիւն դէպի թատրոնը, որպիսին լինում է հազուագիւտ դէպքերում։

Հասարակութեան մէջ եղած խօսակցութիւնները, պիէսի առանձին մրցանակի արժանացած լինելը, յատուկ գրական երեկոյթի նախապատրաստած նպաստաւոր տրամադրութիւնը, պիէսի նախապէս տպված և շատերին ծանօթ լինելը ստեղծել էին մեծ հետաքրքրութիւն հասարակութեան խաւերում։

«Հին Աստուածները» սովորական ձևի պիէս չէ՝ ամբողջացրած գործողութիւններով։ Նա դրամա չէ նման այն ընդունված դրամաներին, որտեղ հերոսները կամ հերոսուհիները ելք որոնում լինէին այս և այն կենսական, կենցաղավարական կամ հոգեբանական հանգոյցներից։ Սակայն թատերական այդ գրուածքը անուանված է դրամա, որովհետև նրա մէջ դրամատիկական տարր է մտցված այն մաքառման մէջ, որ մղում են միմեանց դէմ հոգեկանը և մարմնայինը իրանց հերոս ներկայացուցիչներով։

Դա պատկերների մի շարք է, որոնց համագումարը կոչված է տալու հեղինակի փիլիսոփայական հայեացքների և տրամադրութիւնների արտայայտութիւնը։

«Հին Աստուածների» մէջ պատկերացված է հայի անցեալ վերապրումների մի կարևոր էջը, որտեղ մաքառման մէջ են դրված մտակրօնական այն հոսանքները, որոնք դեր են կատարել հայի աշխարհահայեացքի կազմակերպութեան ասպարէզում։

Պատկերները, որ ուրուագծել է հեղինակը, պարզում են նրա մտածողութեան զանազան ելևէջները և անդրադարձումները։

Իբրև տեխնիկական գործ՝ այդ պատկերները դուրս էին բերված այնպէս որքան հնարաւոր էր եղել այդ Արտիստական թատրոնի մէջ։ Ռեժիսորը գործ էր դրել բոլոր միջոցները գեղեցիկ և արտայայտիչ ներկայացնելու հեղինակի տուած տեսարանները։

Շանթի պիէսի մասին և առթիւ կը տրվեն «Մշակում» մի քանի յօդուածներ։

Մենք այսօր կանգ չենք առնում պիէսի բովանդակութեան վրա, այլ իբրև տպաւորութիւն կարող ենք հաղորդել, որ նա արդարև արժանաւոր մի ստացուածք է հայ ռեպերտուարի համար և պարունակում է իր մէջ հրաշալի տեսարաններ։

Պիէսին վնասում է գործողութեան պակասութիւնը։ Հերոսները խօսում են անդադար, խօսում են յաճախ շատ խելացի, բայց գործ կատարել անկարող են։

Պիէսը շատ է երկարացված։ Ապահով կերպով կարելի էր զոհել վերջին գործողութիւնը և բաւականանալ առաջին երեք գործողութիւններով՝ 9 պատկերներով։

Հասարակութիւնը վարձատրեց դերակատարներին ջերմ ծափահարութիւններով, իսկ բացակայ հեղինակին ուղարկեց յատուկ շնորհաւորական հեռագիր։

Մենք կը վերադառնանք այդ պիէսին։

Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօզդօկ, 17 դեկտեմբերի

«Մշակի» № 262-ում Գէորգ ք. Փարեմուզեանը ծածկելով անհերքելի ճշմարտութիւնները՝ յարձակվում է ինձ վրա, անուանելով ինձ լրտես, բոլորովին չը յիշատակելով թէ ինչ պարագաներումն է կայանում իմ «լրտեսութիւնը»։

Փարեմուզեանը իբր թէ՝ հերքում է «Մշակի» № 216-ում լոյս տեսած տեղեկութիւնը՝ «Տեղացի» ստորագրութեամբ։

Լրագրի սուղ էջերը խնայելով, թողնում եմ այն բոլոր մանրամասնութիւնները, որոնք, հ. Փարեմուզեանի կարծիքով, «լրտեսութիւն» են (գործերի քննութիւնները սկսվել են և շուտով կը պարզվի ճշմարտութիւնը), և կանգնեմ նրա՝ ժողովների մասին գրած անճշտութիւններին։

Հ. Փարեմուզեան գրում է, որ յունիսի 23-ին կայացած ծխ. ժողովը ապօրինի էր։ Արդ՝ եթէ ապօրինի էր, ինչու տէր հայրը ժամանակին չը բողոքեց նրա ապօրինութեան դէմ։

Յունիսի 23-ին կայացած ժողովը օրինաւոր էր այն պատճառով, որ նա արտակարգ էր։ Ժողովված էին երկու եկեղեցիների ծխականները։ Ժողովի հրաւիրաթերթի մէջ յիշված էր, որ առաջին և վերջին ժողովն է, ժամանակը կարճ էր, և այդ ժողովի զբաղման առաջին հարցն էր լինելու՝ երկու պատգամաւորներ ընտրել յուլիսի 1-ին Էջմիածնում ներկայ լինելու Վեհ. Հայրապետի օծման հանդիսին։ Ահա այդքան սուղ ժամանակամիջոցում անպայման հարկաւոր է արտակարգ ժողովը։ Ս. Ստեփանոսի ծխականներից ոչ թէ 21 ծխական էր ներկայ, այլ 32։ Քուէարկութիւնից առաջ՝ մի քանի ծխականներ, տեսնելով հ. Փարեմուզեանի տատանումները և ուղիղ հարցից շեղումները իմ զրկանքների դէմ, զզվելով հեռացան։

Հ. Փարեմուզեան աղաւաղում է եղելութիւնը գրելով թէ՝ ժողովի արձանագրութիւնը տեղ չը հասած՝ կոնսիստորից հեռագիր է ստանում, որ ինքը ընդունէ ինձ։ Տէր-հայրն ասում է, թէ հեռագիրը կոնսիստորը ինքնագլուխ է ուղարկել։

Բայց ո՛չ, ահա եղելութիւնը։

Հ. Փարեմուզեանը յունիսի 23-ի ժողովից յետոյ, նոյն ժողովում պարզ տեսնում է դէպ իրան ժողովրդի բուռն արհամարհանքը և ինձ անմեղ ճանաչելը, և չը գիտենալով ինձնից ինչ ձևով վրէժ լուծել՝ ինքը տէր-հայրը պատասխանը վճարած մի հեռագրով յայտնում է կոնսիստորին, որ ինքը անկարող է ինձ նման լրտեսի հետ ծառայել։

Կոնսիստորը, շատ լաւ հասկանալով տէր-հօր միտքը, հեռագրում է գործակալի պաշտօնակատարին, որ պէտք է ծառայէ Գէորգ ք. Փարեմուզեանը Վարդանեանի հետ։ Բայց պ. Կոժեմյակեանը՝ տանը չը լինելու պատճառով միայն յուլիսի 16-ին է կարողանում յայտնել քահանային՝ կոնսիստորիայից իր ստացած հեռագրի միտքը։ Չեմ կարծում, որ այդ հեռագիրները անհետացած լինեն թէ՝ կոնսիստորիայից և թէ՝ պ. Կոժեմյակեանի մօտից։ Հ. Փարեմուզեանը միանգամայն ծածկում է այն, որ կոնսիստորի հրամանները չը կատարելու համար՝ մի հրամանով արգելվեց քահանայագործելուց։ Նա երեք օր արգելված մնալով առաջնորդից՝ թողութիւն է խնդրում և խոստանում է կատարել կոնսիստորիայի հրամանները։ Հ. Փարեմուզեանի այդ հեռագիր-խոստման պատասխանը շեշտում է, որ տէր-հօրը թողութիւն կը տրվի միմիայն այն դէպքում, եթէ վերջինս Վարդանեանին կընդունէ։

Գալով օգոստոսի 30-ին կայացած ժողովին, կասեմ, որ այդ ժողովի ապօրինութեան դէմ բողոքեցի թեմակալ առաջնորդին, և բողոքս յարգվեց։ Աստրախանի կոնսիստորիան սեպտ. 24-ին № 3628 հրամանագրութեամբ տեղիս Խ. ք. Շահինեանին քննիչ է նշանակել, որ քննէ ժողովի ապօրինութեան ապացոյցները։ Ս. Ստեփանոսի ծխականները ոչ թէ 110 են, այլ նրանց թիւը 151-ից էլ աւել է։ Իսկ ժողովում ոչ թէ 55 հոգի են եղել, այլ 50 հոգի, մէկն էլ բարեպաշտաբար ս. Աստուածածնի ծխականներից է ստորագրել արձանագրութեան թերթին։ Այդ էլ իմացայ հ. քննչի՝ ինձ ուղարկած № 60 գրութիւնից, որով յայտնում է, թէ ճիշդ է, որ ս. Աստուածածնի ծխականներից մէկը ստորագրել է թերթին, և ս. Աստուածածնի այդ ծխականը կեղծարար քահանայի փեսան է։

Գ. ք. Փարեմուզեանը գրում է. «Իշխանութիւնը անիրաւացի կերպով ստիպում է ինձ ենթարկվել իբր թէ իր վարձած տիրացուի (այսինքն իմ) կապրիզներին»։ Տէր-հայրը մոռանում է սակայն, որ ես իր վարձած տիրացուն չեմ, ինձ վարձողը եղել է ծխականների ընտրած երէցփոխը։

Ես լրտես չեմ. եթէ լրտես լինէի, իմ լրտեսութիւնը շուտ երևան կը գար, մանաւանդ այն ժամանակ, երբ ես երկար տարիներ ծառայեցի Թիֆլիսի Գր. Աւ. ք. Մանդակունու մօտ, որը 8—9 տարի վարում է Թիֆլիսի առաջին մասի գործակալական պաշտօնը։ Չեմ կարծում, որ իմ մազաչափ լրտեսութեան նշանը Մանդակունու նման շրջանկատ քահանայից երկար ժամանակ թաքնված մնար։ Եթէ հ. Մանդակունին մի մազաչափ անհաւատարմութիւն ինձանում նկատած լինէր, չեմ կարծում այժմս էլ մոռացած լինի։

Հ. Փարեմուզեանն իր յամառութիւնը շարունակելու համար, ինքնագլուխ, իբր հաշւով Ղզլարից հրաւիրել է մի այնպիսի երիտասարդի, որ իսկի տիրացու էլ չէ, այլ Ղզլարում երկաթավաճառի խանութում ծառայող է, և նրա ամբողջ գիտելիքը հէնց պատարագի մի քանի կտոր երգերն է, որ կիրակի օրերին պատահաբար երգել է Ղզլարում։ Եւ այդ տիրացուին ինքը տէր հայրն է պահում իր տանը և, իր ասելով էլ, 4 ամիս է ռոճիկ է տալիս։ Երէցփոխը նրան տիրացու չի ճանաչում, եկեղեցու օրինական տիրացուն ես եմ և անխափան ստանում եմ ռոճիկս։

Տէր-հօր ասելով, ծխականներից ոչ մէկը ինձ չի ճանաչում տիրացու և չի թողնում օրինակատարութիւնների ժամանակ։ Ժողովուրդը երբէք այդպիսի բան չի արել, այլ ինքը տէր հայրն է, որ չի թողնում ժողովրդին, ասելով թէ՝ «եթէ կուզէք, որ նա տիրացութիւն անի, ես չեմ կատարի ձեր օրինակատարութիւնը»։

Երեք տարի շարունակ ինձանից ոչ մի ժողովուրդ դժգոհ չէ եղել, և ոչ մէկին չեմ նեղացրել. նմանապէս ոչ ոք էլ ինձ մինչև այսօր չէ ասել, թէ «տիրացու, աչքիդ վրա ունք կայ»։ Իսկ Գիօրգիեվսկ գնալուս պատճառն այն էր, որ մի կերպ ուզեցել եմ ազատվել հ. Փարեմուզեանի գազանութիւնից, բայց իմ բաղդից՝ այնտեղի կլիման և պայմանները վնասակար էին իմ առողջութեանս։ Ինչ վերաբերում է իբր թէ 8 րուբլի խլացրած լինելուս, վճռապէս յայտնում եմ, որ այդ էլ մտացածին է։

Ես Գիօրգիևսկում յայտնեցի այնտեղի հրաւիրողին, որ ինքս անկարող եմ այնտեղի կլիման տանել և ոսկրացաւս սաստիկ ցեխերից կարող է ստէպ ստէպ կրկնվել, ուստի թողեցի հեռացայ, գալով կրկին Մօզդօկ՝ էլի նոյն երէցփոխի հրաւէրանօք։ Այնտեղի ռոճիկս ամբողջ ամսվանը ստացած էի և անկարելի էր մնալ ու սպասել օրէ-օր սկսվող ցրտերին. միւս կողմից՝ ընտանեկան հանգամանքներից ստիպված՝ մի քանի օր առաջ շտապեցի Մօզդօկ։ Իսկ աւելորդ ստացածս մի քանի օրվայ էր, որի մի մասը ուղարկել եմ, մնացածը կուղարկեմ ապագայում։

Վարդան Վարդանեան

—

Սարչաբէթ գիւղ, 14 յունվարի

Թոյլ տուէք յարգոյ «Մշակ» լրագրի միջոցով հրապարակական շնորհակալութիւն յայտնելու մեզ լիազօրող Սարչաբէթ գիւղի (Ջալալօղլուի շրջան) համայնքի անունից Թիֆլիսի քաղաքացի Վահան Ցարութիւնեանին, որը 15,000 րուբլու չափ խոշոր գումարով, առանց տոկոսի, օգնութեան հասաւ մեզ վերոյիշեալ համայնքի համար Լօռու մասում գեներալ Գարայեվին պատկանող «Լօքսկի ձոր» կոչված 2170 դեսեատին հողամասը առնելու, նոյնպէս և Բորչալուի գաւառի 3-րդ բաժնի հաշտարար միջնորդ իշխ. Բարաթօվին, որը իր խորհուրդներով ու յորդորներով խրախոյս տուեց մեզ ձեռք բերելու այդ հողը։

Սարչաբէթ գիւղի համայնքի լիազօրներ՝
Արշակ Տէր-Մարտիրոսեան
Պետրոս Աւետիսեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ հաւանականօրէն արտաքին գործերի մինիստրի պաշտօնը դարձեալ կառաջարկվի հայազգի Նորատունկեան էֆենդիին, որ խելացի հեռատեսութեամբ Քեամիլ-փաշայի կաբինէտում խօսեց յօգուտ պատերազմի շարունակութեան շէյխ-իւլ-իսլամի հետ։

◆ Կ. Պօլսում առ այժմ հանգիստ է. ժողովրդական էկսցէսներ չը կան։

◆ Կ. Պօլսից հեռագիր է ստացվել, թէ իբր սուլթանին գահրկէց են արել։

◆ Պետերբուրգում գտնվող Շօա-ուս-Սալթանէն անակնկալ մեկնեց իր եղբայր նախկին շահ Մահմէդ-Ալիի մօտ։ Ենթադրվում է, որ պատրաստվում է պարսկական նոր աւանտիւր։

◆ Բեռլինի լրագիրները Ռուսաստանի քաղաքականութիւնը, որ անջատեց Մօնղօլիան, քաղաքական ինտրիգայի շեդեվր են համարում։

◆ Ռուսաց լուսաւորութեան մինիստր Կասսօն մինիստրների խորհրդին ներկայացրեց Ռօստօվում համալսարան բանալու խնդիրը։

◆ «Г. М.» թերթը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստր Մակլակօվը կողմնակից է լայն ամնիստիայի, որին դիմադրում է արդարադատութեան մինիստր Շչեգլօվիտօվը, մեծ նշանակութիւն ունի հարցի դրական լուծման համար պալատական բարձր ղեկավար շրջանների ազդեցութիւնը։

◆ Հայազգի պատգամաւոր Աջէմեան «Пр. К.» թերթի աշխատակցի հետ ինտերվիուի ժամանակ յայտնել է, որ չորրորդ Դումայի դրութիւնը կայուն է։ Այժմեան ընտրութիւնները ցոյց տուին, որ Ռուսաստանը աջակողմեանների ետևից չէ գնում։

◆ Կառավարական շրջաններում մշակված է նախագիծ Տաշկէնտում պօլիտեխնիկում բանալու հարցի մասին։

◆ «Н. Вр.»-ի ասելով՝ Մոսկվայի նահանգապետ Ջունկօվսկիին ներքին գործերի մինիստրի օգնական (ոստիկանական մասի և ժանդարմների շէֆ) նշանակելը կատարված իրողութիւն պէտք է համարել։

◆ «Н. Вр.»-ն կտրականապէս յայտնում է, որ ներքին գործերի մինիստր Մակլակօվը առաջին հերթին գործադրելու է մամուլի և ոստիկանութեան բարենորոգումները։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

14 յունվարի

ԿԻԵՎ։ Ստոլիպինի արձանի կառուցման մասնաժողովը որոշեց ի թիւս այլ մակագրութիւնների արձանի վրա գրել Ստոլիպինի հետևեալ խօսքերը. «Ձեզ հարկաւոր են մեծ ցնցումներ, մեզ հարկաւոր է մեծ Ռուսաստան։ Ես հաստատ հաւատացած եմ, որ ռուս ազգային գաղափարի լոյսը չի մարվի, այլ շուտով կը բոցավառէ համայն Ռուսաստանը»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրի օգնական Խարուզինը նշանակվում է սենատոր։

ՍԱՐԱՏՕՎ։ Դուման Ռոմանովների Տան յօբելեանը յաւերժացնելու համար որոշեց բաշխել ազգաբնակութեանը 300,000 րուբ. քաղաքային տուրքերը և յատկացնել 250,000 ր. ուսուցչական ինստիտուտ հիմնելու։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նեվրալգիա եւ գլխացաւ

Ես բժշկվեցի շնորհիւ ծրի դեղատոմսի։ Առողջութեան համբաւաբեր։ Հաղորդում եմ այս դեղատոմսը ի գիտութիւն ընդհանուրի։ Նա բուժել է ինձ, և ես շատ ուրախ կը լինեմ, եթէ նրանից օգտվեն և այլ տառապողներ։ Մօտակայ դեղատնից կամ դեղավաճառանոցից խնդրէք 60 գրան Կէֆալդօլ-Ստօր 12 տաբլէտկաներում։ Ընդունէք 2 տաբլէտկա, որը իսկոյն կը թեթևացնէ ձեր ցաւերը. իսկ դրանից յետոյ ընդունէք մի-մի տաբլէտկա իւրաքանչիւր ժամը մի անգամ, մինչև որ կատարելապէս կառողջանաք։ Ես ապշած էի այդ օրինակ շուտափոյթ բժշկութեամբ, սակայն իմ բժիշկը ինձ ասաց, որ այդ դեղատոմսը կազմված է ջղային հիւանդութիւնների յայտնի մի մասնագէտի կողմից։ Այդ դեղը անփոխարինելի է ինֆլուէնցայի, ռեվմատիզմի և գլխացաւի ժամանակ։ Միևնոյն ժամանակ նա բոլորովին անվնաս է։ (П.3867) (№4)

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- ($12\frac{1}{2}$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բեհբուտովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(Հ. Կ.) 377. 100—62

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետեւեալ հրատարակութիւնները.
I
ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ
երկաթ., կօլօնիալ, բանկ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 րուբ.։
II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.
III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10.000 р. (2 изд.) Ц. 85 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.
Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская 22 և գրավաճառանոցներում։
(Ու. Հ. Կ.) 939. 20—14

Открыта подписка на 1913 г.
на ежемѣс. популярно-медицинскій органъ
„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ“
Журналъ посвященъ цѣлямъ самолеченія и какъ лечебникъ въ немъ будутъ указаны самые радикальные способы леченія всѣхъ болѣзней.
Редакція предоставляетъ Безплатно своимъ подписчикамъ медицинскіе совѣты, указываетъ желающимъ спеціальныя лечебницы, курорты, санаторіи и т. д.
Подписчикамъ будетъ выслана въ видѣ ПРЕМІИ первый выпускъ
Большого Домашняго „ЛЕЧЕБНИКА“
который въ отдѣльной продажѣ стоитъ 1 р. и книга „Волосы“.
Подписная цѣна съ пересылкою и преміями на годъ 1 руб. (можно выслать почт. марками въ заказ. письмѣ).
Подписка принимается въ главной конторѣ редакціи: С.-Петербургъ. Троицкая 6, кв. 16. Редакція „Журнала-Лечебника“.
(Հ. Ու.) 923. 10—10

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆԻ
1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (վեներական և ուրիշ ցաւեր, բազմաթիւ խորհուրդներով, րեցէպտներով և նկարներով, գինը 50 կ.
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը», րեցէպտներով և մանրամասն խորհուրդներով ու նկարներով, գինն է 20 կոպ.։
3) «Տղամարդի սեռական կեանքը», շատ հետաքրքրական գիրք ամեն մի չափահասի համար, գինը 30 կ.։
4) «Կեռկառմասի սավարը կամ մօղնի իր կէն», չափազանց ծիծաղաշարժ վօդևիլ չափահասների համար, գինը 20 կ.։
Վաճառվում են Թիֆլիսում «Գուտտենբերգ» և միւս հայ գրախանութներում։ Հեղինակից պահանջողները (անպայման բոլոր 4 գիրքն էլ միասին) ճանապարհածախսը չեն վճարում։ Գինը ուղարկել առաջուց մարկաներով։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул., № 9. А. Г. Есаянцу.
(Օ. Մ.) 975. 10—9

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թիւ շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանօնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(Ա. Օ.) 876. 0—28

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ Ներսիսեան դպրոցի համար հարկաւոր է ԳԱՆՁԱՊԱ Տարեկան ռոճիկն է 800 րուբլի։ Գանձապահը ներկայացնելու է որպէս ապահ վութիւն 6000 րուբլի գրաւական կամ կանխիկ դրամով և կամ տոկոսաբեր տոմսերո Ցանկացողները պէտք է ներկայացնեն խնդիրներ Հոգաբարձութեան անունով մին դեկտեմբերի 16-ը, որից յետոյ խնդիրներ ընդունելու ցանկը կը փակվի։
(Հ. Կ. Հ.) 17. 4—4

Торговая школа съ правами и Бухгалтерскі курсы
по программамъ высшихъ Петерб. курсовъ Об. Рас. Ком. Зн.
Ивана Зах. Теръ-Степанова.
Начало занятій въ Торговой 7 января, а на курсахъ 15 января. Михайловскій пр. д. №
(О. М.) 979. 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный